ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Արդարադատության ակադեմիա»

պետական ոչ առևտրային կազմակերպության

2023 թվականի գործունեության մասին

ԵՐԵՎԱՆ 2024

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3
II. ԴԱՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՈՒՆԿՆԴԻՐՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԲԱԺԻՆ 7
1. Վերապատրաստում և հատուկ ուսուցում 7
2. Մասնագիտական պատրաստում 9
III. ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ԵՎ ՔՆՆՉԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՈՒՆԿՆԴԻՐՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԲԱԺԻՆ 16
1. Վերապատրաստում 16
2. Մասնագիտական պատրաստում 18
3. Հատուկ ուսուցում 23
IV. ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԵՎ ԾՐԱԳՐԱՄԵԹՈԴԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԲԱԺԻՆ 25
1. Մասնագիտական պատրաստման, վերապատրաստման և հատուկ ուսուցման ծրագրերի նախագծերի մշակում 25
2. Առարկայական ծրագրերի մշակում 26
3. Մասնագիտական պատրաստման ընթացքում ունկնդիրներին հանձնարարվող քննական նյութի, գնահատման չափանիշների և ուղեցույցների մշակում 27
4. Առարկայական նոր կուրսերի (դասընթացների) և ուսումնամեթոդական նյութերի (ձեռնարկների) մշակում 28
5. Աշխատաժողովների, հրավիրյալ մասնագետների դասախոսությունների, սեմինարների և վերապատրաստումների կազմակերպում 30
6. Ընթացիկ այլ աշխատանքներ 35
V. ՀԵՌԱՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՎ ՏՏ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ 37
1. Ընդհանուր տեղեկություններ 37
2. Հեռաուսուցման դասընթացներ 37
3. Ընդհանրացված ամփոփում 41
VI. ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԱՅԼ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ 43
VII. ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ 50
1. Եկամուտներ 50
2. Ծախսեր 51
VIII. ԱՅԼ ՈԼՈՐՏՆԵՐ 52

Ի. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

2023 թվականի սեպտեմբերի 13-ին լրացել է «Արդարադատության ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ նաև՝ Ակադեմիա) հիմնադրման 10 տարին:

Ակադեմիայի գործունեության տասնամյա ճանապարհը սոսկ արդարադատության ոլորտում կրթության մասին չէ, այլ ներդրված անսահման ջանքերի, խնդիրների ու դժվարությունների հաղթահարման և բազմաթիվ հաջողությունների: Ձևավորման, կայացման և զարգացման այս պատասխանատու 10 տարիները վկայում են կառույցի՝ ավելի որակյալ ուսուցում ապահովելու և շարունակաբար կատարելագործվելու հանձնառության մասին:

Նշված ժամանակահատվածի առավել նշանակալի ձեռքբերումներն են՝

- Ուսուցման գործընթացի շարունակական բարելավումը, մասնավորապես՝
  - ✓ մասնագիտական պատրաստման մաս կազմող քննությունների քանակի զգալի նվազեցումը, դրանց համակարգչայնացումը՝ ապահովելով համացանցային համապատասխան տեղեկատվական բազաներից օգտվելու հնարավորությամբ,
  - ✓ փորձաշրջանի ժամանակահատվածի ընդլայնումը և դրա՝ ուսումնառության երրորդ (դատավարական հիմնախնդիրներին վերաբերող) փուլից սկսած զուգահեռ կազմակերպումը,
  - ✓ ունկնդիրների շրջանում սոցիոլոգիական անանուն հարցումների պարբերաբար և շարունակական իրականացումն ու դրանց արդյունքների վերլուծությունը և դրա հիման վրա համապատասխան կրթական գործընթացների կատարելագործումը.
  - ✓ ժամանակի պահանջներին համապատասխան՝ նոր դասընթացների և դրանց վերաբերելի նորարարական լուծումների, մեթոդական ու այլ նյութերի մշակումը և ուսումնական գործընթացում կիրառումը.
- Օտարերկրյա համանման հաստատությունների (Ռուսաստանի Դաշնության, Մոլդովայի, Ուկրաինայի, Բելառուսի, Ղազախստանի, Վրաստանի, Իտալիայի, Իս-

պանիայի, Հունգարիայի, Խորվաթիայի, Շվեդիայի, Ալբանիայի), միջազգային կառույցների (Եվրոպայի խորհուրդ, Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակ՝ OSCE ODIHR, ՄԱԿ Փախստականների հարցերով գերագույն հանձնակատար՝ UNHCR, ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամ՝ UNICEF, Մարդկային զարգացման միջազգային կենտրոն՝ ICHD, Միջազգային հակակոռուպցիոն ակադեմիա՝ IACA, «Վորլդ Վիժն Ինթերնեյշընալ» միջազգային բարեգործական կազմակերպություն, Եվրասիական տնտեսական միության դատարան, Աշխատանքի միջազգային կազմակերպություն՝ ILO, Միգրացիայի միջազգային կազմակերպություն՝ IOM) հետ արդյունավետ համագործակցության ձևավորումն ու շարունակական զարգացումը, ինչպես նաև մասնագիտացված միջազգային կառույցներին (Դատական ոլորտի մասնագետների ուսուցման միջազգային կազմակերպություն՝ IOJT, Դատավորների մասնագիտական պատրաստում, վերապատրաստում և որակավորման բարձրացում իրականացնող կազմակերպությունների կոնսորցիում) անդամակցությունը.

- Ակադեմիայի ուսումնական, գիտահետազոտական ու ծրագրամեթոդական գործունեության պլանավորմանը, համակարգմանը և կարգավորմանը օժանդակելու նպատակով Ռեկտորին կից գործող կոլեգիալ մարմնի՝ Գիտական խորհրդի ստեղծումը.
- «Բանբեր Արդարադատության ակադեմիայի» գիտագործնական հանդեսի հիմնադրումը և ՀՀ բարձրագույն որակավորման կոմիտեի սահմանած դոկտորական և թեկնածուական ատենախոսությունների հիմնական արդյունքների և դրույթների հրատարակման համար ընդունելի պարբերական գիտական հրատարակությունների ցուցակում դրա շարունակական ընդգրկումը.
- Մի շարք մենագրությունների և ուսումնամեթոդական ու գիտագործնական նյութերի նախապատրաստումը և Ակադեմիայի գիտական խորհրդի երաշխավորությամբ դրանց տպագրությունն ու կրթական գործընթացում ներդնումը և նպատակային կիրառումը.

- Ակադեմիայի պաշտոնական նոր՝ հարստացած բովանդակությամբ, արդիական ձևավորմամբ և տեխնիկական լուծումներով կայքէջի (www.aoj.am) գործարկումը և դրա անվտանգ սպասարկման ապահովումը.
- ՀՀ-ում ԱՄՆ դեսպանատան աջակցությամբ լայնածավալ ծրագիր իրականացումը, որի շրջանակներում մշակվել են նոր դասընթացներ, ամբողջությամբ նորոգվել, կահավորվել ու գերժամանակակից տեխնիկայով համալրվել է Ակադեմիայի լսարաններից մեկը, որը հաջողությամբ ծառայում է որպես քննասենյակ, ինչպես նաև տարատեսակ միջոցառումների անցկացման հարմարավետ վայր՝ համաժամանակյա թարգմանություն ապահովելու բոլոր հնարավորություններով.
- Ակադեմիայի բակային տարածքում աշխատակիցների, ունկնդիրների, հյուրերի և այլ այցելուների համար նախատեսված պուրակի հիմնումը, այն հայկական բնակլիմայական պայմաններին համապատասխանող ծառատեսակներով համալրումը և հատուկ խոտաբույսերով կանաչապատումը, դրա վերջնամասում հայրենիքի պաշտպանության համար նահատակվածների հիշատակը հավերժացնող հուշակոթողի (խաչքարի) տեղադրումը:

2023 թվականի ընթացքում նույնպես, ղեկավարվելով ՀՀ Սահմանադրությամբ, «ՀՀ դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքով, «Արդարադատության ակադեմիայի մասին» ՀՀ օրենքով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով, «Դատախազության մասին» ՀՀ օրենքով, «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքով, «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենքով, «Արդարադատության ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությամբ, Ակադեմիայի կառավարման խորհրդի (այսուհետ նաև՝ Խորհուրդ) որոշումներով, այլ իրավական ակտերով և համագործակցության հուշագրերով ու համաձայնագրերով՝ Ակադեմիան իր գործունեության նպատակների և խնդիրների կենսագործման ուղղությամբ՝

- կազմակերպել և անցկացրել է որակավորման ստուգման արդյունքներով դատավորների թեկնածուների հավակնորդների, դատախազների, ՀՀ քննչական կոմի-

տեում և Հակակոռուպցիոն կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց (քննիչների) թեկնածությունների համապատասխան ցուցակներում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստում.

- կազմակերպել և անցկացրել է դատավորների, դատախազների, ՀՀ քննչական կոմիտեի և Հակակոռուպցիոն կոմիտեի քննիչների, դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկված անձանց վերապատրաստում, ինչպես նաև դատավորների, դատախազների և քննիչների լրացուցիչ վերապատրաստում.
- կազմակերպել է դատավորների, դատախազների, քննիչների և դատական կարգադրիչների հատուկ ուսուցում՝ հատուկ միջոցների և հրազենի գործադրման ունակություններն ուսուցանելու նպատակով.
- կնքել է պայմանագրեր և արդյունավետորեն համագործակցել Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա իրավաբանական ու ֆիզիկական անձանց, միջազգային կազմակերպությունների հետ.
- մշակել և շրջանառության մեջ է դրել ուսումնամեթոդական նյութեր՝ համապատասխան կրթական ծրագրերի իրականացման համար.
- հրապարակել է «Բանբեր Արդարադատության ակադեմիայի» գիտագործնական հանդեսի հերթական համարները.
- իր գործունեության նպատակներին համապատասխան՝ իրականացրել է Ակադեմիայի կանոնադրությամբ նախատեսված ձեռնարկատիրական գործունեություն և այլ աշխատանքներ:

2023 թվականի ընթացքում գործունեության տարբեր բնագավառներում իրականացված բազմաթիվ միջոցառումներն ու ծրագրերը ևս կոչված են եղել խթանելու Ակադեմիայի առաջընթացը, ապահովելու ուսումնական գործընթացի բարելավումն ու զարգացումը և ուսուցման որակի բարձրացումը:

Հաջորդիվ հանգամանորեն ներկայացվում է Ակադեմիայի 2023 թվականի գործունեությունն՝ ըստ կառուցվածքային ստորաբաժանումների և ոլորտների:

II. ԴԱՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՈՒՆԿՆԴԻՐՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԲԱԺԻՆ

Հաշվետու ժամանակահատվածում բաժինն աշխատանքներ է իրականացրել հետևյալ ուղղություններով՝

1) դատավորների և դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկված անձանց տարեկան վերապատրաստում.
2) որակավորման հատուկ ստուգմանը չմասնակցած կամ որակավորման հատուկ ստուգումը չհաղթահարած դատավորների լրացուցիչ վերապատրաստում.
3) դատավորների թեկնածուների հավակնորդների ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստում.
4) վերաքննիչ դատարաններում դատավոր նշանակվելու համար առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկված (իրավագիտության բնագավառում գիտական աստիճան ունեցող, վերջին 10 տարվա ընթացքում մասնագիտական աշխատանքի 8 տարվա փորձառություն ունեցող) անձանց մասնագիտական պատրաստում.
5) դատական կարգադրիչների վերապատրաստում և հատուկ ուսուցում.
6) դատավորների հատուկ ուսուցում:

1. Վերապատրաստում և հատուկ ուսուցում

- **Դատավորների և դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկված անձանց վերապատրաստում.**

«Դատավորների և դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկված անձանց տարեկան վերապատրաստման ուսուցման ծրագիրը հաստատելու մասին» Արդարադատության ակադեմիայի կառավարման խորհրդի 2022 թվականի դեկտեմբերի 9-ի ԿԽ-010/22 որոշման հավելված 1-ի հիման վրա իրականացվել է դատավորների և դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկված անձանց վերապատրաստում՝ ***2 հատվածով, 26 խմբով***:

Խմբերում ընդգրկվել է ***7-33 դատավոր***: Ծրագիրն իրականացվել է ուսուցման առկա և հեռավար ձևերով: Հեռավար մասնագիտական դասընթացների մոդուլում

ընդգրկված դասընթացները կազմակերպվել են ուսուցման հեռավար, իսկ ընդհանուր և հարակից ու հատուկ մասնագիտական դասընթացների մոդուլում ընդգրկվածները՝ առկա ուսուցման ձևով: Ուսումնառության ժամկետը կազմել է ***40–ական*** ակադեմիական ժամ:

Ընդհանուր և հարակից մասնագիտական առարկաներով դատավորների և դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկված անձանց վերապատրաստման դասընթացներն իրականացվել են 2023թ. ապրիլի 03-ից հունիսի 02-ը, հատուկ մասնագիտական առարկաներով՝ սեպտեմբերի 04-ից դեկտեմբերի 15-ը:

Հայտով ներկայացվել է 288 ունկնդիր: Նրանցից վերապատրաստում են անցել 277-ը, որոնցից 3-ը՝ Ակադեմիայում ուսումնառությունն ավարտած ու դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկված անձինք:

- **Դատավորների հատուկ ուսուցում.**

Դատավորների հատուկ ուսուցման դասընթացներն անցկացվել են ***2 խմբով՝ 6-ական*** ակադեմիական ժամ տևողությամբ՝ 16.09.2023թ. և 23.09.2023թ.:

Հայտով ներկայացվել է 80 դատավոր, որոնցից հատուկ ուսուցմանը մասնակցել են 21-ը:

- **Որակավորման հատուկ ստուգմանը չմասնակցած կամ այն չհաղթահարած դատավորների լրացուցիչ վերապատրաստում.**

«Որակավորման հատուկ ստուգմանը չմասնակցած կամ որակավորման հատուկ ստուգումը չհաղթահարած դատավորների համար Արդարադատության ակադեմիայում կազմակերպվող 2023թ. լրացուցիչ վերապատրաստման ուսուցման ծրագիրը հաստատելու մասին» Արդարադատության ակադեմիայի կառավարման խորհրդի 2023 թվականի մայիսի 24-ի ԿԽ-008/23 որոշման հավելված 1-ի հիման վրա Արդարադատության ակադեմիան կազմակերպել և անցկացրել է որակավորման հատուկ ստուգմանը չմասնակցած կամ որակավորման հատուկ ստուգումը չհաղթահարած դատավորների լրացուցիչ վերապատրաստում:

Դասընթացների տևողությունը կազմել է ***306*** ակադեմիական ժամ:

Դասընթացներն իրականացվել են 2023թ. հունիսի 05-ից սեպտեմբերի 05-ը:

Հայտով ներկայացվել է 12 ունկնդիր: Նրանք բոլորը վերապատրաստումն անցել են:

- **Դատական կարգադրիչների վերապատրաստում և հատուկ ուսուցում.**

«Դատական կարգադրիչների վերապատրաստման և հատուկ ուսուցման ծրագիրը հաստատելու մասին» Արդարադատության ակադեմիայի կառավարման խորհրդի 2022 թվականի դեկտեմբերի 9-ի ԿԽ-010/22 որոշման հավելված 3-ի հիման վրա իրականացվել է դատական կարգադրիչների վերապատրաստում և հատուկ ուսուցում՝ ***30-ական*** ակադեմիական ժամ տևողությամբ: Դատական կարգադրիչների վերապատրաստման և հատուկ ուսուցման դասընթացներն իրականացվել են ***առցանց*** (ZOOM հավելվածի միջոցով)՝ մայիսի 15-ից հուլիսի 19-ը: Դասընթացները կազմակերպվել են ***10 խմբով***: Խմբերում ընդգրկվել է ***13-29*** դատական կարգադրիչ: Ունկնդիրները դասընթացի ավարտին հանձնել են քննություն:

Հայտով ներկայացվել է 213 դատական կարգադրիչ: Վերապատրաստումն անցել է 198 դատական կարգադրիչ:

2. Մասնագիտական պատրաստում

- «Հակակոռուպցիոն դատարանի դատավորների թեկնածուների հավակնորդների ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստման ուսուցման ծրագիրը հաստատելու մասին» Ակադեմիայի կառավարման խորհրդի 2022 թվականի դեկտեմբերի 26-ի ԿԽ-012/22/3 որոշման հավելված 1-ի հիման վրա իրականացվել է դատավորների թեկնածուների հավակնորդների 2022թ. ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստումը:

Դատավորների թեկնածուների հավակնորդների ցուցակում ընդգրկված անձանց ուսուցումը սկսվել է 2022 թ. հունվարի 16-ին և ավարտվել նույն տարվա մարտի 03-ին:

Ունկնդիրների ուսումնառության ժամաքանակը, համաձայն ուսուցման ծրագրի, կազմել է **274** ակադեմիական ժամ, որից ***120-ը*** կազմել է դասընթացների, ***4-ը***՝ քննաշրջանի, ***150-ը***՝ փորձաշրջանի ժամաքանակը:

Հայտով ներկայացվել է դատավորների թեկնածուների հավակնորդների ցուցակում ընդգրկված 2 անձ՝ քաղաքացիական մասնագիտացմամբ, որոնք հաջողությամբ ավարտել են մասնագիտական պատրաստումը:

• «Վերաքննիչ դատարաններում դատավոր (հակակոռուպցիոն) նշանակվելու համար առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստման ուսուցման ծրագիրը հաստատելու մասին» Ակադեմիայի կառավարման խորհրդի 2022 թվականի դեկտեմբերի 26-ի ԿԽ-012/22/4 որոշման հավելված 1-ի հիման վրա իրականացվել է դատավորների թեկնածուների հավակնորդների 2022թ. ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստումը:

Դատավորների թեկնածուների հավակնորդների ցուցակում ընդգրկված անձանց ուսուցումը սկսվել է 2022 թ. հունվարի 16-ին և ավարտվել նույն տարվա մարտի 03-ին:

Քաղաքացիական մասնագիտացմամբ ունկնդիրների ուսումնառության ժամաքանակը, համաձայն ուսուցման ծրագրի, կազմել է ***274*** ակադեմիական ժամ, որից ***120-ը*** կազմել է դասընթացների, ***4-ը***՝ քննաշրջանի, ***150-ը***՝ փորձաշրջանի ժամաքանակը:

Քրեական մասնագիտացմամբ ունկնդիրների ուսումնառության ժամաքանակը, համաձայն ուսուցման ծրագրի, կազմել է ***274*** ակադեմիական ժամ, որից ***120-ը*** կազմել է դասընթացների, ***4-ը***՝ քննաշրջանի, ***150-ը***՝ փորձաշրջանի ժամաքանակը:

Հայտով ներկայացվել է դատավորների թեկնածուների հավակնորդների ցուցակում ընդգրկված 5 անձ, որոնցից 3-ը՝ քաղաքացիական մասնագիտացմամբ, և 2-ը՝ քրեական մասնագիտացմամբ: Բոլորը հաջողությամբ ավարտել են մասնագիտական պատրաստումը:

• «Դատավորների թեկնածուների հավակնորդների 2022թ. ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստման ուսուցման ծրագիրը հաստատելու մասին» Ակադեմիայի կառավարման խորհրդի 2022 թվականի դեկտեմբերի 26-ի ԿԽ-012/22/2 որոշման հավելված 1-ի հիման վրա իրականացվել է դատավորների թեկնածուների հավակնորդների 2022 թվականի ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստումը:

Ուսուցումը սկսվել է 2022 թվականի հունվարի 30-ին և ավարտվել նույն տարվա սեպտեմբերի 15-ին:

Քաղաքացիական մասնագիտացմամբ ունկնդիրների ուսումնառության ժամաքանակը, համաձայն ուսուցման ծրագրի, կազմել է ***1046*** ակադեմիական ժամ, որից ***320-ը*** կազմել է դասընթացների, ***6-ը***՝ քննաշրջանի, ***720-ը***՝ փորձաշրջանի ժամաքանակը:

Քրեական մասնագիտացմամբ ունկնդիրների ուսումնառության ժամաքանակը, համաձայն ուսուցման ծրագրի, կազմել է ***1046*** ակադեմիական ժամ, որից ***320-ը*** կազմել է դասընթացների, ***6-ը***՝ քննաշրջանի, ***720-ը***՝ փորձաշրջանի ժամաքանակը:

Հայտով ներկայացվել է դատավորների թեկնածուների հավակնորդների ցուցակում ընդգրկված 22 անձ, որոնցից 9-ը՝ քաղաքացիական մասնագիտացմամբ, և 13-ը՝ քրեական մասնագիտացմամբ: Բոլորը հաջողությամբ ավարտել են մասնագիտական պատրաստումը:

- «Դատավորների թեկնածուների հավակնորդներ (վարչական մասնագիտացմամբ) 2023 թվականի ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստման ուսուցման ծրագիրը հաստատելու մասին» Ակադեմիայի կառավարման խորհրդի 2023 թ. փետրվարի 03-ի ԿԽ-002/23 որոշման հավելված 1-ի հիման վրա իրականացվել է դատավորների թեկնածուների հավակնորդների (վարչական մասնագիտացմամբ) 2023 թվականի ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստումը:

Ուսուցումը սկսվել է 2023 թվականի մարտի 03-ին և ավարտվել նույն տարվա հոկտեմբերի 15-ին: Ունկնդիրների ուսումնառության ժամաքանակը, համաձայն ուսուցման ծրագրի, կազմել է ***1046*** ակադեմիական ժամ, որից ***320-ը*** կազմել է դասընթացների, ***6-ը***՝ քննաշրջանի, ***720-ը***՝ փորձաշրջանի ժամաքանակը:

Հայտով ներկայացվել է դատավորների թեկնածուների հավակնորդների ցուցակում ընդգրկված 14 անձ: Մասնագիտական պատրաստումն ավարտել են 11-ը:

- «Վերաքննիչ դատարաններում դատավոր նշանակվելու համար առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների 2022թ. ցուցակում ընդգրկված՝ վարչական մասնագիտացման բաժնի՝ իրավագիտության բնագավառում գիտական աստի-

ճան ունեցող անձանց գործնական հմտությունների զարգացման մասով ուսուցման ծրագիրը հաստատելու մասին» Ակադեմիայի կառավարման խորհրդի 2023 թ. մարտի 30-ի ԿԽ-004/23/4 որոշման հիման վրա մասնագիտական պատրաստում է անցել առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների 2022 թվականի ցուցակում ընդգրկված ***1 անձ***:

Գործնական հմտությունների զարգացման մասով ուսուցումը ներառել է փորձաշրջանը Վարչական դատարանում և Վերաքննիչ վարչական դատարանում: Այն սկսվել է 2023 թ. ապրիլի 10-ին և ավարտվել ապրիլի 21-ին, որից ապրիլի 10–14-ը՝ ***Վարչական դատարանում***, 17–21-ը՝ ***Վերաքննիչ վարչական դատարանում***:

- «Վերաքննիչ դատարաններում դատավոր նշանակվելու համար առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների 2023թ. ցուցակում ընդգրկված՝ քրեական մասնագիտացման բաժնի՝ վերջին 10 տարվա ընթացքում մասնագիտական աշխատանքի առնվազն 8 տարվա փորձառություն ունեցող անձանց գործնական հմտությունների զարգացման մասով ուսուցման ծրագիրը հաստատելու մասին» Ակադեմիայի կառավարման խորհրդի 2023 թ. օգոստոսի 11-ի ԿԽ-010/23/2 որոշման հիման վրա մասնագիտական պատրաստում է անցել առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների 2023թ. ցուցակում ընդգրկված ***1 անձ***:

Գործնական հմտությունների զարգացման մասով ուսուցումը ներառել է փորձաշրջանը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում (համապատասխան մասնագիտացմամբ դատավորի մոտ) և ՀՀ վերաքննիչ քրեական դատարանում: Այն սկսվել է 2023 թ. օգոստոսի 21-ին և ավարտվել սեպտեմբերի 22-ին, որից օգոստոսի 21–25-ը՝ ***Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում***, օգոստոսի 28–սեպտեմբերի 22-ը՝ ***Վերաքննիչ քրեական դատարանում***:

- «Հակակոռուպցիոն դատարանի դատավորների թեկնածուների հավակնորդների (քրեական մասնագիտացմամբ) 2023թ. ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստման ուսուցման ծրագիրը հաստատելու մասին» Ակադեմիայի կառավարման խորհրդի 2023 թ. օգոստոսի 11-ի ԿԽ-010/23/1 որոշման հավելված 1-ի հի-

ման վրա մասնագիտական պատրաստում է անցել դատավորների թեկնածուների 2023թ. ցուցակում ընդգրկված ***1 անձ***:

Ուսուցումը սկսվել է 2023 թ. օգոստոսի 21-ին և ավարտվել նույն տարվա հոկտեմբերի 06-ին: Ուսումնառության ժամաքանակը, համաձայն ուսուցման ծրագրի, կազմել է ***274*** ակադեմիական ժամ, որից ***120-ը*** կազմել է դասընթացների, ***4-ը***՝ քննաշրջանի, ***150-ը***՝ փորձաշրջանի ժամաքանակը:

Հայտով ներկայացվել է դատավորների թեկնածուների հավակնորդների ցուցակում ընդգրկված 1 անձ, որը հաջողությամբ ավարտել է մասնագիտական պատրաստումը:

- «Վերաքննիչ դատարաններում դատավոր նշանակվելու համար առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների հակակոռուպցիոն մասնագիտացման բաժնի հակակոռուպցիոն քաղաքացիական գործերի քննության ենթաբաժնի ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստման ուսուցման ծրագիրը հաստատելու մասին» Ակադեմիայի կառավարման խորհրդի 2023 թվականի հոկտեմբերի 03-ի ԿԽ-012/23/2 որոշման հավելված 1-ի հիման վրա մասնագիտական պատրաստում է անցել առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների 2023թ. ցուցակում ընդգրկված ***2 անձ***:

Ուսուցումը սկսվել է 2023 թ. հոկտեմբերի 09-ին և ավարտվել նույն ամսվա 27-ին: Ուսումնառության ժամաքանակը, համաձայն ուսուցման ծրագրի, կազմել է ***150*** ակադեմիական ժամ, որից ***46-ը*** կազմել է դասընթացների, ***4-ը***՝ քննաշրջանի, ***100-ը***՝ փորձաշրջանի ժամաքանակը:

Հայտով ներկայացվել է առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների հավակնորդների ցուցակում ընդգրկված 2 անձ, որոնք հաջողությամբ ավարտել են մասնագիտական պատրաստումը:

- «Դատավորների թեկնածուների հավակնորդների (քաղաքացիական մասնագիտացմամբ) 2023թ. ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստման ուսուցման ծրագիրը հաստատելու մասին» Ակադեմիայի կառավարման խորհրդի 2023 թվականի հոկտեմբերի 03-ի ԿԽ-012/23/1 որոշման հավելված 1-ի հիման վրա

իրականացվել է դատավորների թեկնածուների հավակնորդների 2023թ. ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստումը:

Ուսուցումը սկսվել է 2023 թ. նոյեմբերի 01-ին և ***ավարտվելու է*** 2024 թ. հունիսի 14-ին: Ուսումնառության ժամաքանակը, համաձայն ուսուցման ծրագրի, ***1042*** ակադեմիական ժամ է, որից ***316-ը*** կազմում է դասընթացների, ***6-ը***՝ քննաշրջանի, ***720-ը***՝ փորձաշրջանի ժամաքանակը:

Հայտով ներկայացվել է դատավորների թեկնածուների հավակնորդների ցուցակում ընդգրկված 18 անձ, որոնք ուսուցումն ավարտելու են 2024 թվականին:

Բաժնի գործունեության վերաբերյալ վիճակագրական ամփոփ ցուցանիշներն արտացոլված են ստորև ներկայացվող աղյուսակներ 1-ում և 2-ում՝

Աղյուսակ 1

Ուսուցման տեսակ	2023 թ. հայտով ներկայացված	2023 թ. ուսուցում անցած (%)
Մասնագիտական պատրաստում	**45**	**42 (93,3%)**
Քրեական մասնագիտացում	**13**	**13 (100,0%)**
Քաղաքացիական մասնագիտացում	**9**	**9 (100,0%)**
Վարչական մասնագիտացում	**14**	**11 (79,2%)**
Վարչական մասնագիտացում Վերաքննիչ դատարաններում դատավոր նշանակվելու համար առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկված՝ իրավագիտության բնագավառում գիտական աստիճան ունեցող անձանց մասնագիտական պատրաստում	**1**	**1 (100,0%)**
Քաղաքացիական մասնագիտացում Հակակոռուպցիոն դատարանի դատավորների թեկնածուների հավակնորդների ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստում	**2**	**2 (100,0%)**
Քաղաքացիական մասնագիտացում Վերաքննիչ դատարաններում դատավոր (հակակոռուպցիոն) նշանակվելու համար առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստում	**5**	**5 (100,0%)**
Քրեական մասնագիտացում Վերաքննիչ դատարաններում դատավոր նշանակվելու համար առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկված՝ վերջին 10 տարվա ընթացքում մասնագիտական աշխատանքի առնվազն 8 տարվա փորձառություն ունեցող անձանց մասնագիտական պատրաստում	**1**	**1 (100,0%)**

Վերապատրաստում	**513**	**487 (95,0%)**
Դատավորներ	**288**	**277 (96,2%)**
Դատավորների լրացուցիչ վերապատրաստում	**12**	**12 (100,0%)**
Դատական կարգադրիչներ	**213**	**198 (93,0%)**
Հատուկ ուսուցում	**293**	**219 (74,7%)**
Դատավորներ	**80**	**21 (26,3%)**
Դատական կարգադրիչներ	**213**	**198 (93,0%)**
Ընդամենը	**851**	**748 (87,9%)**

Աղյուսակ 2

Բաժնի գործունեությունը 2018-2023 թթ. ընթացքում

Տարի	**Մասնագիտական պատրաստում**		**Վերապատրաստում**		**Հատուկ ուսուցում**		**Ընդամենը**	
	Հայտ	***Անցած (%)***	***Հայտ***	***Անցած (%)***	***Հայտ***	***Անցած (%)***	***Հայտ***	***Անցած (%)***
2018	16	16 (100,0%)	879	796 (90,6%)	300	260 (86,7%)	1 195	1 072 (89,7%)
2019	36	33 (91,7%)	799	749 (93,7%)	267	228 (85,3%)	1 102	1 010 (91,7%)
2020	27	***28* (110,0%)***	235	231 (98,2%)	61	37 (60,6%)	323	296 (91,6%)
2021	27	26 (96,3%)	610	593 (97,2%)	397	354 (89,2%)	1 034	973 (94,1%)
2022	52	52 (100,0%)	450	425 (94,5%)	216	170 (78,8%)	718	647 (90,1%)
2023	45	42 (93,3%)	513	487 (95,0%)	293	219 (74,7%)	851	748 (87,9%)
Ընդամենը	**203**	**197 (97,0%)**	**3 486**	**3 281 (94,1%)**	**1 534**	**1 268 (82,7%)**	**5 223**	**4 746 (90,1%)**

* 2020 թվականին ուսուցումն անցել է նախորդ տարի տարկետում ստացած 1 հավակնորդ:

III. ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ԵՎ ՔՆՆՉԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՈՒՆԿՆԴԻՐՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԲԱԺԻՆ

Հաշվետու ժամանակահատվածում բաժինն աշխատանքներ է իրականացրել հետևյալ ուղղություններով՝

1) դատախազների վերապատրաստում.
2) դատախազների լրացուցիչ վերապատրաստում.
3) ՀՀ քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց (քննիչների) վերապատրաստում.
4) ՀՀ քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց լրացուցիչ վերապատրաստում.
5) դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստում.
6) ՀՀ քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց (քննիչների) թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստում.
7) ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում ինքնավար պաշտոնների թեկնածուների ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստում.
8) դատախազների հատուկ ուսուցում.
9) ՀՀ քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց (քննիչների) հատուկ ուսուցում:

1. Վերապատրաստում

- **Դատախազների վերապատրաստում.**

Ակադեմիայի կառավարման խորհրդի 2022 թ.-ի դեկտեմբերի 15-ի ԿԽ-011/22/3 որոշմամբ հաստատված «Դատախազների տարեկան վերապատրաստման ուսուցման ծրագրի» հիման վրա դատախազների վերապատրաստումն իրականացվել է ուսուցման առկա և հեռավար ձևերով:

Դատախազների ընդհանուր և հարակից մասնագիտական ու հատուկ մասնագիտական դասընթացների ուսումնառության (առկա) ժամաքանակը կազմել է ***40-ական*** ակադեմիական ժամ: Լրացուցիչ վերապատրաստման ժամաքանակը կազմել է ***6*** ակադեմիական ժամ:

Դասընթացները կազմակերպվել են հետևյալ ժամանակացույցին համապատասխան՝

ա) ընդհանուր և հարակից մասնագիտական դասընթացներ՝ ***3 խումբ****՝ 08.05.–26.05.2023թ.,*

բ) հատուկ մասնագիտական դասընթացներ՝ ***11 խումբ****՝ 11.09.–24.11.2023թ.,*

գ) լրացուցիչ վերապատրաստման դասընթացներ՝ ***2 խումբ****՝ 18.09.-10.11.2023թ.:*

Խմբերում ընդգրկվել է ***4-31*** դատախազ:

Հայտով ներկայացվել է՝

ա) ընդհանուր և հարակից մասնագիտական դասընթացներով՝ 127 դատախազ,

բ) հատուկ մասնագիտական դասընթացներով՝ 251 դատախազ,

գ) լրացուցիչ վերապատրաստման դասընթացներով՝ 13 դատախազ:

Վերապատրաստում անցել է՝

ա) ընդհանուր և հարակից մասնագիտական դասընթացներով՝ 118 դատախազ,

բ) հատուկ մասնագիտական դասընթացներով՝ 231 դատախազ,

գ) լրացուցիչ վերապատրաստման դասընթացներով՝ 11 դատախազ:

- **ՀՀ քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց (քննիչների) վերապատրաստում.**

ՀՀ քննչական կոմիտեի որակավորման հանձնաժողովի 2023թ. հունիսի 1-ի որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց (քննիչների) վերապատրաստման ծրագրի» հիման վրա քննիչների վերապատրաստումն իրականացվել է առկա ուսուցման ձևով:

Ուսուցման ծրագրի համաձայն՝ ՀՀ քննչական կոմիտեի ղեկավար պաշտոն զբաղեցնող քննիչների ուսումնառության ժամաքանակը կազմել է ***24***, իսկ ՀՀ քննչական կոմիտեի մյուս քննիչներինը՝ ***30*** ակադեմիական ժամ:

ՀՀ քննչական կոմիտեի ղեկավար պաշտոն զբաղեցնող քննիչների դասընթացներն իրականացվել են ***3 խմբով՝*** 20.11.–06.12.2023թ.:

ՀՀ քննչական կոմիտեի մյուս քննիչների դասընթացներն իրականացվել են ***9 խմբով՝*** 18.09.-16.11.2023թ.:

Խմբերում ընդգրկվել է ***12-27*** քննիչ:

Հայտով ներկայացվել է 184 քննիչ և 58 ղեկավար պաշտոն զբաղեցնող քննիչ: Վերապատրաստում անցել է 168 քննիչ և 57 ղեկավար պաշտոն զբաղեցնող քննիչ:

- **ՀՀ քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց լրացուցիչ վերապատրաստում.**

ՀՀ քննչական կոմիտեի որակավորման հանձնաժողովի 2023թ. ապրիլի 4-ի որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց 2023 թվականի լրացուցիչ վերապատրաստման ծրագրի» հիման վրա քննիչների լրացուցիչ վերապատրաստումն իրականացվել է առկա ուսուցման ձևով:

Ուսուցման ծրագրի համաձայն՝ ՀՀ քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց լրացուցիչ վերապատրաստման ժամաքանակը կազմել է ***60*** ակադեմիական ժամ: Դասընթացներն իրականացվել են 1 փուլով՝ 17.04.-27.04.2023թ.:

Հայտով ներկայացվել է 12, վերապատրաստում անցել՝ ՀՀ քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող 11 անձ:

2. Մասնագիտական պատրաստում

- **Դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստում.**

✓ Խորհրդի 2023թ. մարտի 30-ի ԿԽ-004/23/6 որոշմամբ հաստատված «Դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստման ուսուցման ծրագրի» հիման վրա իրականացվել է դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստում:

Ուսումնառության ժամաքանակը կազմել է ***1012*** ակադեմիական ժամ, որից ***286-ը***՝ դասընթացների, ***6-ը***՝ քննաշրջանի, ***720-ը***՝ փորձաշրջանի ժամաքանակը: Մասնագիտական պատրաստումը կազմակերպվել է ***1 խմբով***՝ 02.05.2023թ.–01.12.2023թ.:

Հայտով ներկայացվել է 11 անձ, որոնք հաջողությամբ ավարտել են մասնագիտական պատրաստումը:

✓ Խորհրդի 2023թ. ապրիլի 27-ի ԿԽ-006/23 որոշմամբ հաստատված «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառույթներ իրականացնող դատախազների թեկնածությունների 2023 թվականի ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստման ուսուցման ծրագրի» հիման վրա իրականացվել է ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառույթներ իրականացնող դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձի մասնագիտական պատրաստում:

Ուսումնառության ժամաքանակը կազմել է ***122*** ակադեմիական ժամ, որից ***80-ը***՝ դասընթացների, ***2-ը***՝ քննաշրջանի, ***40-ը***՝ փորձաշրջանի ժամաքանակը: Մասնագիտական պատրաստումը կազմակերպվել է ***1 խմբով***՝ 02.05.-26.05.2023թ.:

Հայտով ներկայացվել է ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառույթներ իրականացնող դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված 1 անձ, որն ավարտել է մասնագիտական պատրաստումը:

- **ՀՀ քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց (քննիչների) թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստում.**

✓ ՀՀ քննչական կոմիտեի որակավորման հանձնաժողովի 2023թ. մարտի 17-ի որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեում ինք-

նավար պաշտոն զբաղեցնող անձանց (քննիչների) թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստման ուսուցման ծրագրի» հիման վրա իրականացվել է ՀՀ քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց (քննիչների) թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց (առաջին խումբ) մասնագիտական պատրաստում՝ առկա ուսուցման ձևով:

Ուսումնառության ժամաքանակը կազմել է ***110*** ակադեմիական ժամ, որից ***104-ը***՝ դասընթացները, ***6-ը***՝ քննաշրջանը, ինչպես նաև ***1 ամիս*** փորձաշրջանը: Մասնագիտական պատրաստումը կազմակերպվել է 27.03.-09.06.2023թ.:

Ուսումնառությանը մասնակցել է ՀՀ քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց (քննիչների) թեկնածությունների ցուցակում ընդգրկված ***32 անձ***: ՀՀ քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանցից մեկը ՀՀ քննչական կոմիտեի որակավորման հանձնաժողովի 29.06.2023թ. որոշմամբ հանվել է ՀՀ քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց թեկնածությունների ցուցակից:

Հայտով ներկայացվել է ՀՀ քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց (քննիչների) թեկնածությունների ցուցակում ընդգրկված 32 անձ, մասնագիտական պատրաստումն ավարտել է 31 անձ:

✓ ՀՀ քննչական կոմիտեի որակավորման հանձնաժողովի 2023թ. հունիսի 6-ի որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց (քննիչների) թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստման ուսուցման ծրագրի» հիման վրա իրականացվել է ՀՀ քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց (քննիչների) թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց (երկրորդ խումբ) մասնագիտական պատրաստում՝ առկա ուսուցման ձևով:

Ուսումնառության ժամաքանակը կազմել է ***110*** ակադեմիական ժամ, որից ***104-ը***՝ դասընթացները, ***6-ը***՝ քննաշրջանը, ինչպես նաև ***1 ամիս*** փորձաշրջանը: Մասնագիտական պատրաստումը կազմակերպվել է 19.06.–31.08.2023թ.:

Հայտով ներկայացվել է ՀՀ քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց (քննիչների) թեկնածությունների ցուցակում ընդգրկված 19 անձ, որոնք հաջողությամբ ավարտել են մասնագիտական պատրաստումը:

✓ ՀՀ քննչական կոմիտեի որակավորման հանձնաժողովի 2023թ. հուլիսի 26-ի որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց (քննիչների) թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստման ուսուցման ծրագրի» հիման վրա իրականացվել է ՀՀ քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց (քննիչների) թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց (երրորդ խումբ) մասնագիտական պատրաստում՝ առկա ուսուցման ձևով:

Ուսումնառության ժամաքանակը կազմել է ***110*** ակադեմիական ժամ, որից ***104-ը***՝ դասընթացները, ***6-ը***՝ քննաշրջանը, ինչպես նաև ***1 ամիս*** փորձաշրջանը: Մասնագիտական պատրաստումը կազմակերպվել է 07.08.–18.10.2023թ.:

Ուսումնառությանը մասնակցել է ՀՀ քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց (քննիչների) թեկնածությունների ցուցակում ընդգրկված 22 անձ (ՀՀ քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանցից մեկը չի մասնակցել դասընթացներին), որոնցից մեկը, փորձաշրջանը չանցնելու հիմքով, ՀՀ քննչական կոմիտեի որակավորման հանձնաժողովի 17.11.2023թ. որոշմամբ հանվել է ՀՀ քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց թեկնածությունների ցուցակից:

Հայտով ներկայացվել է ՀՀ քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց (քննիչների) թեկնածությունների ցուցակում ընդգրկված 23 անձ, մասնագիտական պատրաստումն ավարտել է 21 անձ:

- **ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում ինքնավար պաշտոնների թեկնածուների ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստում.**

✓ Խորհրդի 2023թ. փետրվարի 17-ի ԿԽ-003/23 որոշմամբ հաստատված «Հակակոռուպցիոն կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց (քննիչների)

թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստման ուսուցման ծրագրի» հիման վրա իրականացվել է հակակոռուպցիոն կոմիտեում ինքնավար պաշտոնների թեկնածուների ցուցակում ընդգրկված անձի (առաջին խումբ) մասնագիտական պատրաստում՝ առկա ուսուցման ձևով:

Ուսումնառության ժամաքանակը կազմել է ***140*** ակադեմիական ժամ, որից ***134-ը***՝ դասընթացները, ***6-ը***՝ քննաշրջանը, ինչպես նաև ***3 շաբաթ*** փորձաշրջանը: Մասնագիտական պատրաստումը կազմակերպվել է 24.02.–20.03.2023թ.:

Հայտով ներկայացվել է հակակոռուպցիոն կոմիտեում ինքնավար պաշտոնների թեկնածուների ցուցակում ընդգրկված 1 անձ, որը հաջողությամբ ավարտել է մասնագիտական պատրաստումը:

✓ Խորհրդի 2023թ. մայիսի 10-ի ԿԽ-007/23 որոշմամբ հաստատված «Հակակոռուպցիոն կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց (քննիչների) թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստման ուսուցման ծրագրի» հիման վրա իրականացվել է հակակոռուպցիոն կոմիտեում ինքնավար պաշտոնների թեկնածուների ցուցակում ընդգրկված անձանց (երկրորդ խումբ) մասնագիտական պատրաստում՝ առկա ուսուցման ձևով:

Ուսումնառության ժամաքանակը կազմել է ***140*** ակադեմիական ժամ, որից ***134-ը***՝ դասընթացները, ***6-ը***՝ քննաշրջանը, ինչպես նաև ***3 շաբաթ*** փորձաշրջանը: Մասնագիտական պատրաստումը կազմակերպվել է 17.05.–09.06.2023թ.:

Հայտով ներկայացվել է հակակոռուպցիոն կոմիտեում ինքնավար պաշտոնների թեկնածուների ցուցակում ընդգրկված 2 անձ, որոնք հաջողությամբ ավարտել են մասնագիտական պատրաստումը:

✓ Խորհրդի 2023թ. սեպտեմբերի 14-ի ԿԽ-011/23 որոշմամբ հաստատված «Հակակոռուպցիոն կոմիտեում ինքնավար պաշտոնների թեկնածուների ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստման ուսուցման ծրագրի» հիման վրա իրականացվել է հակակոռուպցիոն կոմիտեում ինքնավար պաշտոնների թեկնածուների ցուցակում ընդգրկված անձանց (երրորդ խումբ) մասնագիտական պատրաստում՝ առկա ուսուցման ձևով:

Ուսումնառության ժամաքանակը կազմել է ***140*** ակադեմիական ժամ, որից ***134-ը***՝ դասընթացները, ***6-ը***՝ քննաշրջանը, ինչպես նաև ***3 շաբաթ*** փորձաշրջանը: Մասնագիտական պատրաստումը կազմակերպվել է 18.09.–11.10.2023թ.:

Հայտով ներկայացվել է հակակոռուպցիոն կոմիտեում ինքնավար պաշտոնների թեկնածուների ցուցակում ընդգրկված 3 անձ, որոնք հաջողությամբ ավարտել են մասնագիտական պատրաստումը:

3. Հատուկ ուսուցում

- **Դատախազների հատուկ ուսուցում.**

Խորհրդի 2022թ. դեկտեմբերի 15-ի ԿԽ-011/22/3 որոշմամբ հաստատված «Դատախազների հատուկ ուսուցման ծրագրի» հիման վրա դատախազների հատուկ ուսուցման դասընթացներն անցկացվել են ***2 խմբով՝ 6-ական*** ակադեմիական ժամ տևողությամբ՝ 07.10.2023թ. և 14.10.2023թ.:

Հայտով ներկայացվել է 55 դատախազ, որոնցից հատուկ ուսուցման դասընթացներին մասնակցել են 46-ը:

- **ՀՀ քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց (քննիչների) հատուկ ուսուցում.**

ՀՀ քննչական կոմիտեի որակավորման հանձնաժողովի 2023թ. հունիսի 1-ի որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց (քննիչների) հատուկ ուսուցման ծրագրի» հիման վրա քննիչների հատուկ ուսուցման դասընթացներն անցկացվել են ***5 խմբով՝ 10-ական*** ակադեմիական ժամ տևողությամբ՝ 08.07.–05.08.2023թ.:

Հայտով ներկայացվել է 208 քննիչ, որոնցից հատուկ ուսուցման դասընթացներին մասնակցել են 185-ը:

<u>Բաժնի գործունեության վերաբերյալ վիճակագրական ամփոփ ցուցանիշներն արտացոլված են ստորև ներկայացվող աղյուսակներ 3-ում և 4-ում՝</u>

Աղյուսակ 3

Ուսուցման տեսակ	2023թ. հայտով ներկայացված	2023թ. ուսուցում անցած (%)
Մասնագիտական պատրաստում	**92**	**89 (96,7%)**
Դատախազի թեկնածուներ	11	11 (100,0%)
Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառույթներ իրականացնող դատախազի թեկնածուներ	1	1 (100,0%)
ՀՀ ՔԿ քննիչի թեկնածուներ	74	71 (95,9%)
ՀՀ Հակակոռուպցիոն կոմիտեի քննիչի թեկնածուներ	6	6 (100,0%)
Վերապատրաստում	**493**	**456 (92.5%)**
Դատախազներ	251	231 (92,0%)
ՀՀ ՔԿ քննիչներ	184	168 (91,3%)
ՀՀ ՔԿ ղեկ. Կազմ	58	57 (98,3%)
Լրացուցիչ վերապատրաստում	**25**	**22 (88,0%)**
Դատախազներ	13	11 (84,6%)
ՀՀ ՔԿ քննիչներ	12	11 (91,7%)
Հատուկ ուսուցում	**263**	**231 (87,8%)**
Դատախազներ	55	46 (83,6%)
ՀՀ ՔԿ քննիչներ	208	185 (88,9%)
Ընդամենը	**873**	**798 (91,4%)**

Աղյուսակ 4

Բաժնի գործունեությունը 2018-2023 թթ. ընթացքում

Տարի	Մասնագիտական պատրաստում		Վերապատրաստում		Հատուկ ուսուցում		Ընդամենը	
	Հայտ	*Անցած (%)*	*Հայտ*	*Անցած (%)*	*Հայտ*	*Անցած (%)*	*Հայտ*	*Անցած (%)*
2018	76	71 (93,4%)	817	733 (89,7%)	181	133 (73,5%)	1 074	937 (87,2%)
2019	70	67 (95,7%)	442	415 (93,9%)	68	53 (77,9%)	580	535 (92,2%)
2020	71	67 (94,3%)	507	481 (94,9%)	82	55 (67,1%)	660	603 (91,4%)
2021	123	117 (95,1%)	507	482 (95,1%)	67	43 (64,2%)	697	642 (92,1%)
2022	120	115 (95,8%)	847	804 (94,9%)	38	28 (73,7%)	1 005	947 (94,2%)
2023	92	89 (96,7%)	518	478 (92,3%)	263	231 (87,8%)	873	798 (91,4%)
Ընդամենը	**552**	**526 (95,3%)**	**3 638**	**3 393 (93,3%)**	**699**	**543 (77,7%)**	**4 889**	**4 462 (91,3%)**

IV. ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԵՎ ԾՐԱԳՐԱՄԵԹՈԴԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԲԱԺԻՆ

Հաշվետու ժամանակահատվածում բաժինն աշխատանքներ է իրականացրել հետևյալ ուղղություններով՝

1) մասնագիտական պատրաստման, վերապատրաստման, լրացուցիչ վերապատրաստման և հատուկ ուսուցման տարեկան ծրագրերի նախագծերի մշակում,
2) դասընթացավարների հետ համատեղ առարկայական ծրագրերի մշակում,
3) մասնագիտական պատրաստման ընթացքում ունկնդիրներին հանձնարարվող քննական նյութի, գնահատման չափանիշների և ուղեցույցերի մշակում,
4) առարկայական նոր կուրսերի (դասընթացների) և ուսումնամեթոդական նյութերի (ձեռնարկների) մշակում,
5) աշխատաժողովների, հրավիրյալ մասնագետների դասախոսությունների, սեմինարների և վերապատրաստումների կազմակերպում, դրանց առնչվող նյութերի մշակում,
6) ընթացիկ այլ աշխատանքներ:

1. Մասնագիտական պատրաստման, վերապատրաստման և հատուկ ուսուցման ծրագրերի նախագծերի մշակում

• Հաշվետու ժամանակահատվածում մշակվել են ուսուցման հետևյալ ծրագրերի (ընդհանուր առմամբ՝ 26) նախագծերը.

✓ դատավորների թեկնածուների հավակնորդների, դատախազների թեկնածությունների, Հակակոռուպցիոն կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց (քննիչների) թեկնածուների, ՀՀ քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց (քննիչների) թեկնածությունների ցուցակներում ընդգրկված անձանց ***մասնագիտական պատրաստման – 15***,

✓ դատավորների և դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկված անձանց, դատախազների, ՀՀ քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց (քննիչների), Հակակոռուպցիոն կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեց-

նող անձանց (քննիչների), ինչպես նաև դատական կարգադրիչների ***վերապատրաստման – 5***,

- ✓ որակավորման հատուկ ստուգմանը չմասնակցած կամ որակավորման հատուկ ստուգումը չհաղթահարած դատավորների, ՀՀ քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց (քննիչների) ***լրացուցիչ վերապատրաստման – 2***,
- ✓ դատավորների և դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկված անձանց, դատախազների, ՀՀ քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց (քննիչների), դատական կարգադրիչների ***հատուկ ուսուցման – 4***:

Վերոհիշյալ նախագծերը մշակելիս հիմք են ընդունվել ներպետական և միջազգային մի շարք իրավական ակտերի պահանջները, ինչպես նաև հաշվի են առնվել շահագրգիռ գերատեսչությունների կողմից «Արդարադատության ակադեմիայի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածով սահմանված կարգով ներկայացված առաջարկությունները:

2. Առարկայական ծրագրերի մշակում

«Արդարադատության ակադեմիայի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հաստատված և 2023 թվականի տարեկան ծրագրերով նախատեսված առարկայացանկի և կրթական չափորոշիչների հիման վրա Բաժինը, դասընթացավարների հետ համատեղ, իրականացրել են թվով ***85 առարկայական ծրագրերի*** մշակման և վերամշակման աշխատանքներ: Վերամշակված առարկայական ծրագրերի հիմքում դրվել են նախորդ տարիներին մշակված ծրագրերը:

Հաշվետու ժամանակահատվածում ***վերամշակվել են ընդհանուր առմամբ 66*** հետևյալ առարկայական ծրագրերը՝

- ✓ դատավորների թեկնածուների հավակնորդների, դատախազների, քննիչների թեկնածությունների ցուցակներում ընդգրկված անձանց ***մասնագիտական պատրաստման – 62***,
- ✓ դատավորների և դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկված անձանց ***տարեկան վերապատրաստման – 3***,
- ✓ դատախազների ***տարեկան վերապատրաստման – 1***:

Առարկայական ծրագրերը մշակելիս (վերամշակելիս) հիմք են ընդունվել իրավունքի ոլորտում առկա զարգացումները, մասնավորապես՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի, ՀՀ սահմանադրական դատարանի և ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից արտահայտած իրավական նոր դիրքորոշումները, ինչպես նաև ՀՀ-ում ընթացող դատաիրավական բարեփոխումները և իրավակիրառ պրակտիկայում առկա առավել խնդրահարույց հարցերը: Այդ կապակցությամբ իրականացվել է համապատասխան ոլորտի բազմակողմանի ուսումնասիրություն՝ նշված ծրագրերն Ակադեմիայի գործունեության նպատակներին և ունկնդիրների պահանջներին առավելագույնս համապատասխանեցնելու համար:

3. Մասնագիտական պատրաստման ընթացքում ունկնդիրներին հանձնարարվող քննական նյութի, գնահատման չափանիշների և ուղեցույցների մշակում

Դատավորների, դատախազների, քննիչների թեկնածությունների համապատասխան ցուցակներում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստման արդյունքների գնահատման համար իրականացվել է մասնագիտական պատրաստման ծրագրերում ներառված առարկայական կուրսերի (դասընթացների) քննական նյութի կազմում, քննական առաջադրանքների տիպային պատասխանների մշակում:

Ընդհանուր առմամբ իրականացվել է 62 դասընթացի քննական նյութի մշակում՝

- ✓ դատավորների թեկնածուների հավակնորդների (վարչական մասնագիտացմամբ) 2023 թ. ցուցակում ընդգրկված անձանց քննությունների համար – ***11***,
- ✓ Հակակոռուպցիոն դատարանի դատավորների թեկնածուների հավակնորդների (քրեական մասնագիտացմամբ) 2023 թ. ցուցակում ընդգրկված անձանց քննությունների համար – ***5***,
- ✓ դատավորների թեկնածուների հավակնորդների (քաղաքացիական մասնագիտացմամբ) ցուցակում ընդգրկված անձանց քննությունների համար – ***11***,
- ✓ վերաքննիչ դատարաններում դատավոր նշանակվելու համար առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների (հակակոռուպցիոն) մասնագիտացման

բաժնի հակակոռուպցիոն քաղաքացիական գործերի քննության ենթաբաժնի ցուցակում ընդգրկված անձանց քննությունների համար – ***4***,

- ✓ Հակակոռուպցիոն դատարանի դատավորների թեկնածուների հավակնորդների 2023 թ. ցուցակում ընդգրկված անձանց քննությունների համար – ***7***,
- ✓ դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց քննությունների համար – ***11***,
- ✓ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառույթներ իրականացնող դատախազների թեկնածությունների 2023 թ. ցուցակում ընդգրկված անձանց քննությունների համար – ***2***,
- ✓ Հակակոռուպցիոն կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց (քննիչների) թեկնածուների ցուցակում ընդգրկված անձանց քննությունների համար – ***6***,
- ✓ ՀՀ քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց (քննիչների) թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց քննությունների համար – ***5***:

4. Առարկայական նոր կուրսերի (դասընթացների) և ուսումնամեթոդական նյութերի (ձեռնարկների) մշակում

Հաշվետու ժամանակահատվածում մշակվել են ընդհանուր առմամբ 19 հետևյալ նոր դասընթացները.

- ✓ Դատավորների և դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկված անձանց **տարեկան վերապատրաստման – 6**՝
  1) J-G-006-24 – Էլեկտրոնային արդարադատություն,
  2) J-G-009-24 – Իրավաբանական գիր և մեթոդաբանություն,
  3) J-G-014-24 – ՄԻԵԴ որոնողական համակարգերի կիրառում,
  4) J-BN-006-24 – Սնանկության գործերով միջազգային պրակտիկա, նախադեպային որոշումների ուսումնասիրություն,
  5) J-CR-006-24 – Իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության քրեաիրավական և քրեադատավարական հիմնախնդիրները,

6) J-AC-CR-007-24 – Կոռուպցիայի կանխարգելման արդի հարցերը:

✓ Դատախազների **տարեկան վերապատրաստման – 3՝**

1) P-CR-023-24 – Իրավաբանական անձը՝ որպես քրեական պատասխանատվության սուբյեկտ,
2) P-CR-024-24 – Փողերի լվացման (ահաբեկչության ֆինանսավորման) հանցակազմի որակման առանձնահատկությունները և քննության մեթոդիկան,
3) P-CR-025-24 – Հանրային ծառայության շահերի դեմ ուղղված հանցագործությունների որակման և քննության առանձնահատկությունները:

✓ ՀՀ քննչական կոմիտեի քննիչների **տարեկան վերապատրաստման – 2՝**

1) IC-010-23 – Համագործակցության վարույթի առանձնահատկությունները,
2) IC-035-23 – Փողերի լվացման հանցակազմի քննության առանձնահատկությունները:

✓ Հակակոռուպցիոն կոմիտեի քննիչների **տարեկան վերապատրաստման – 8՝**

1) IAC-001-24 – ՀՀ քրեական իրավունքի արդի հարցեր,
2) IAC-002-24 – ՀՀ քրեական դատավարության արդի հարցեր,
3) IAC-003-24 – Քրեաիրավական և քրեադատավարական ոլորտի վճռաբեկ դատարանի նախադեպային և սահմանադրական դատարանի որոշումների կիրառման արդի հարցերը,
4) IAC-004-24 – Փողերի լվացման ոլորտի արդի հարցեր,
5) IAC-005-24 – Իրավաբանական անձանց ներգրավվածությունը ՓԼԱՖ սխեմաներում,
6) IAC-006-24 – Քրեագիտական տակտիկայի և մեթոդիկայի արդի հարցեր,
7) IAC-007-24 – Քրեական գործերով ՄԻԵԴ իրավական դիրքորոշումների կիրառման արդի հարցեր,
8) IAC-008-24 – Կոռուպցիայի դեմ պայքարի արդի հարցեր:

2023 թվականին Ակադեմիայի գիտական խորհրդի երաշխավորությամբ լույս են տեսել ուսումնական գործընթացում և պրակտիկայում լայնորեն կիրառվող հետևյալ հրապարակումները.

- Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Ակադեմիայի ռեկտոր Սերգեյ Առաքելյանի և իրավաբանական գիտությունների թեկնածու, ՀՀ գլխավոր դատախազության մարդու դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության ավագ դատախազ Արիստակես Բարսեղյանի՝ «Մարդու դեմ ուղղված հանցագործություններն ըստ ՀՀ քրեական նոր օրենսգրքի: Գիտագործնական մեկնաբանություններ» աշխատությունը:
- ՀՀ վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն քրեական պալատի դատավոր, Ակադեմիայի դասընթացավար Սերգեյ Մարաբյանի՝ «Առաջին ատյանի դատարանում քրեական վարույթով դատական նիստը նախագահողի ուղեցույց» խորագրով գիրքը:
- Հայարփի Զարգարյանի, Հովիկ Շահնազարյանի, Գոռ Թորոսյանի (մասնագիտացված դատավորներ), Վահե Հովհաննիսյանի (ազգային փորձագետ) և Վիտալի Կասկոյի (միջազգային փորձագետ) համահեղինակությամբ՝ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթը՝ որպես քաղաքացիական դատավարության տարբերակված ձև» խորագրով գիրքը:

5. Աշխատաժողովների, հրավիրյալ մասնագետների դասախոսությունների, սեմինարների և վերապատրաստումների կազմակերպում

- Հունվար-մարտ ամիսներին Ակադեմիան Եվրոպայի խորհրդի (ԵԽ) հետ համագործակցության շրջանակներում անցկացրել է ECRI GPR 15 «Պայքար ատելության խոսքի դեմ» ***HELP-ի դասընթացը***, որին մասնակցել են 24 դատավոր և 7 դատախազ, որոնցից դասընթացն ավարտել են 25-ը:
- Փետրվարի 17-ից 18-ը Ակադեմիան «Տեխնիկական աջակցություն «Հայաստանում արդարադատության ոլորտի բարեփոխումներին» ծրագրի» հետ համատեղ Ծաղկաձորում անցկացրել է ***աշխատաժողով***, որին մասնակցել են Ակադեմիայի ռեկտորը, պրոռեկտորը, աշխատակազմի ղեկավարը, կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները:

- Մարտի 7-ին Ակադեմիայում անցկացվել է ***կլոր սեղան-քննարկում*** «Քաղաքացիական գործերով վարույթի ընթացիկ հարցերը» թեմայով, որը կազմակերպել էր Ակադեմիան՝ Եվրոպական միության հետ համատեղ՝ «Աջակցություն Հայաստանում արդարադատության ոլորտի բարեփոխումներին» ծրագրի շրջանակում: Քննարկմանը մասնակցել են քաղաքացիական մասնագիտացմամբ դատավորներ: Քննարկումը վարել է Ծրագրի դատաիրավական բարեփոխումների գծով փորձագետ Վահագն Գրիգորյանը:
- Մարտի 14-ից 17-ը Ակադեմիայում անցկացվել է ***4-օրյա սեմինար***՝ «Կիբերհանցավորությունն ու էլեկտրոնային ապացույցները» թեմայով, որին մասնակցել են Ակադեմիայի դասընթացավարները և ունկնդիրները՝ դատավորներ, դատախազներ, քննիչներ: Սեմինարն անցկացվել է Եվրոպայի խորհրդի (ԵԽ) և Եվրոպական միության կողմից մշակած «CyberEast» ծրագրի շրջանակում՝ Ակադեմիայի հետ համատեղ: Սեմինարը վարել են ԵԽ փորձագետներ Անդրեյ Ենաչին, Հանիա Հելվեհը և Բրանկո Ստամենկովիչը:
- Մարտի 19-ին Ակադեմիայում անցկացվել է «Դատական իշխանության անկախությունը՝ որպես իրավական պետության գրավական» թեմայով ***աշխատաժողով***, որը կազմակերպել էր Ակադեմիան՝ «Կոնրադ Ադենաուեր» հիմնադրամի և Միջազգային իրավական համագործակցության գերմանական հիմնադրամի (IRZ)-ի հետ համատեղ: Աշխատաժողովին մասնակցեցել են դատավորներ:
- Ապրիլի 25-ից 26-ը Աղվերանում անցկացվել է ***պիլոտային վերապատրաստում*** նվիրված դատական արհեստին և դատավորի դերին: Այն իրականացրել է Ակադեմիան՝ Շվեդիայի ազգային դատարանների վարչության հետ համատեղ՝ «Հայաստանի դատավորների կարողությունների զարգացում՝ դատական համակարգի նկատմամբ նոր ակնկալիքներին համապատասխանելու և հանրային վստահությունն ամրապնդելու նպատակով» ծրագրի շրջանակում: Միջոցառմանը ներկա էին Ակադեմիայի աշխատակազմի ներկայացուցիչները, Շվեդիայի ազգային դատարանների վարչության ներկայացուցիչները, դատավորներ, ազգային և միջազգային փորձագետներ:

- Մայիսի 10-ին և 11-ին Ակադեմիայում անցկացվել են ***սեմինարներ***՝ նվիրված դատական արհեստին և դատավորի դերին: Սեմինարներն իրականացվել են Շվեդիայի ազգային դատարանների վարչության հետ համատեղ՝ «Հայաստանի դատավորների կարողությունների զարգացում՝ դատական համակարգի նկատմամբ նոր ակնկալիքներին համապատասխանելու և հանրային վստահությունն ամրապնդելու նպատակով» ծրագրի շրջանակում: Սեմինարներին մասնակցել են դատավորների թեկնածուների հավակնորդներ:
- Մայիսի 16-ին Ակադեմիայում անցկացվել է ***սեմինար***՝ «Քրեական իրավունքի հիմունքները. վճիռ և պատիժներ (սանկցիաներ, անվտանգության և այլընտրանքային միջոցներ)» թեմայով: Սեմինարը կազմակերպել է Ակադեմիան՝ Միջազգային իրավական համագործակցության գերմանական հիմնադրամի (IRZ) հետ համատեղ: Սեմինարին մասնակցել են քրեական մասնագիտացմամբ դատավորների թեկնածուների հավակնորդներ և դատախազի թեկնածուներ:
- Մայիսի 22-ին Ակադեմիայում ***դասախոսությամբ*** հանդես են եկել Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) դատարանի դատավորներ Ալեքսանդր Ֆեդորցովը և Արմեն Թումանյանը:
- Մայիսի 25-ին Ակադեմիայում անցկացվել է ***սեմինար*** «Ապացուցման բեռը քաղաքացիական դատավարությունում. խնդրահարույց հարցեր» թեմայով: Սեմինարը կազմակերպել է Ակադեմիան՝ Եվրոպական միության հետ համատեղ՝ «Աջակցություն Հայաստանում արդարադատության ոլորտի բարեփոխումներին» ծրագրի շրջանակում: Սեմինարին մասնակցել են քաղաքացիական մասնագիտացմամբ դատավորների թեկնածուների հավակնորդները: Սեմինարը վարել է ծրագրի դատաիրավական բարեփոխումների գծով փորձագետ Վահագն Գրիգորյանը:
- Մայիսի 31-ին Ակադեմիայում անցկացվել է ***երկօրյա դատախաղ – վերապատրաստում՝*** «Խոշտանգման սահմանման մեջ ուժեղ ցավի տարրի մասին ուղեցույցը պրակտիկայում կիրառելու շուրջ» թեմայով, որը կազմակերպել է Ակադեմիան՝ Ռաուլ Վալլենբերգի անվան մարդու իրավունքների և մարդասիրական իրավունքի շվեդական ինստիտուտի հետ համատեղ: Մասնակցել են քրեական մասնագի-

տացմամբ դատավորի թեկնածուների հավակնորդներ և դատախազի թեկնածուներ:

- Հունիսի 1-ին Ակադեմիայում անցկացվել է «Մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման վերաբերյալ քրեական վարույթներով զոհակենտրոն մոտեցումների և զոհակենտրոն քննության ապահովմանն ուղղված» մոդուլով ***երկօրյա վերապատրաստում***: Միջոցառումը կազմակերպել է Ակադեմիան՝ ԱՄՆ պետքարտուղարության ֆինանսավորմամբ՝ «Վորլդ Վիժն Ինթերնեյշընալ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Միասին ընդդեմ մարդկանց թարֆիքինգի» ծրագրի շրջանակում: Մասնակցել են դատախազներ, քննիչներ և ՀՀ ՆԳՆ ոստիկանության աշխատակիցներ:
- Հունիսի 2-ից 4-ը Դիլիջանում անցկացվել է «Մարդու իրավունքների պաշտպանությունը մինչդատական քրեական վարույթի շրջանակներում» թեմայով ***աշխատաժողով***: Միջոցառումը կազմակերպել է Ակադեմիան՝ Ռաուլ Վալլենբերգի անվան մարդու իրավունքների և մարդասիրական իրավունքի ինստիտուտի հետ համատեղ: Աշխատաժողովը վարել են փորձագետներ Լյալ Ս. Սունգան (Ռ.Վալլենբերգ ինստիտուտի դասախոս) և Արսեն Նիկողոսյանը (ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի դատավոր, Ակադեմիայի դասընթացավար): Աշխատաժողովին մասնակցել են քրեական մասնագիտացմամբ դատավորներ և Ակադեմիայի աշխատակիցներ:
- Սեպտեմբերի 7-ին Ակադեմիայում դատավորների համար անցկացվել է ***քննարկում*** նվիրված միջազգային առևտրային արբիտրաժին: Քննարկումը վարել են Սինգապուրից և Հոնկոնգից ժամանած դատական համակարգի ներկայացուցիչները:
- Հոկտեմբերի 2-ին Ակադեմիայում «Սոցիալական ինժեներիայի, այն է՝ մարդու հոգեբանության վրա ազդելով տեղեկատվության անհրաժեշտ հասանելիության ստացման մեթոդի առանձնահատկությունները, ձեռք բերված տեղեկատվության կիրառման և դրա դեմ պայքարի արդյունավետ մեխանիզմները» թեմայով ***դասախոսությամբ*** հանդես է եկել սոցիալական ինժեներիայի, ռիսկերի կառավարման

և մեդիայի հարցերով փորձագետ, գրող Ռոման Ռոմաչյովը: Մասնակցել են Ակադեմիայի աշխատակազմի ներկայացուցիչները, քրեական մասնագիտացմամբ դատավորներ, դատախազներ:

- Հոկտեմբերի 5-ին Ակադեմիան Եվրոպայի խորհրդի գործընկերների հետ համատեղ՝ ԵԽ «Աջակցություն Հայաստանում Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների արդյունավետ կատարմանը» ծրագրի շրջանակում անցկացրել է ***վերապատրաստումների շարք*** դատավորների համար՝ նվիրված ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի կիրառման գործնական խնդիրներին: Վերապատրաստման դասընթացներին մասնակցել է քրեական մասնագիտացմամբ 80 դատավոր:
- Հոկտեմբերի 11-12-ը Ակադեմիայում անցկացվել է ***աշխատաժողով՝*** «Մարդու իրավունքների պաշտպանությունը մինչդատական քրեական վարույթի ընթացքում» թեմայով: Աշխատաժողովը կազմակերպել է Ակադեմիան՝ Ռաուլ Վալլենբերգի անվան մարդու իրավունքների և մարդասիրական իրավունքի ինստիտուտի հետ համատեղ: Մասնակցել են դատախազի և քննիչի թեկնածուները: Աշխատաժողովը վարել են միջազգային և ազգային փորձագետներ Լյալ Ս. Սունգան և Արսեն Նիկողոսյանը:
- Նոյեմբերի 3-ից 4-ը Ակադեմիան Շվեդիայի Ազգային դատարանների ադմինիստրացիայի հետ համատեղ՝ «Հայաստանի դատավորների կարողությունների զարգացում՝ դատական համակարգի նկատմամբ նոր ակնկալիքներին համապատասխանելու և հանրային վստահությունն ամրապնդելու նպատակով» Շվեդիայի կառավարության կողմից ֆինանսավորող հայ-շվեդական բազմամյա ծրագրի շրջանակներում Ծաղկաձորում անցկացրել է ***վերապատրաստում*** դատավորների համար՝ նվիրված դատական արհեստին և դատավորի դերին: Վերապատրաստմանը մասնակցել են նաև Ակադեմիայի աշխատակազմի ներկայացուցիչները:
- Նոյեմբերի 9-ին և 16-ին Ակադեմիան Եվրոպայի խորհրդի գործընկերների հետ համատեղ՝ ԵԽ «Աջակցություն Հայաստանում Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների արդյունավետ կատարմանը» ծրագրի շրջանակում

անցկացրել է ***վերապատրաստման դասընթացներ*** դատավորների համար՝ նվիրված ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի կիրառման գործնական խնդիրներին: Վերոնշյալ ծրագիրն անցկացվել է ԵՄ Հայաստանի համար իրականացվող 2023-2026թթ. գործողությունների ծրագրի շրջանակում: Վերապատրաստումները վարել է Ակադեմիայի դասընթացավար, ԵՄ ազգային փորձագետ, ի.գ.թ., դոցենտ Հրայր Ղուկասյանը:

- Նոյեմբերի 27-ին Ակադեմիայում անցկացվել է ***երկօրյա սեմինար*** դատավորների համար՝ «Պետական գնումների գործերի դատական վերանայում» թեմայով: Սեմինարը վարել են Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (OECD) «Սիգմա» (SIGMA) ծրագրի փորձագետներ Ալեքսանդրա Մելեշկոն, Փիթեր Գյորթլերը, Սիլվիու Պոպան և Բորուտ Սմրդելը (հեռավար): Վերապատրաստումն անցկացրել են դատավորներ Սուսան Ալգորդը, Մերիթ Բերյենդահլը և Սերգեյ Մարաբյանը:

6. Ընթացիկ այլ աշխատանքներ

Բաժինն իրականացրել է նաև ընթացիկ այլ աշխատանքներ: Մասնավորապես.

- մշակվել են Ակադեմիայի ներքին և անհատական ակտերի, այլ փաստաթղթերի նախագծերը, այդ թվում՝
  - ✓ Ակադեմիայի ռեկտորի հրամանների,
  - ✓ Ակադեմիայի և «Հանրային կառավարման զարգացման, ռազմավարական հետազոտությունների և վերապատրաստման կենտրոն» ՀԿ-ի միջև փոխըմբռնման, իսկ Ակադեմիայի և Ալբանիայի Հանրապետության դատավորների և դատախազների դպրոցի միջև՝ համագործակցության վերաբերյալ հուշագրերի,
  - ✓ Ակադեմիային հասցեագրված գրությունների պատասխանների,
  - ✓ Ակադեմիայի՝ որպես առաջատար կազմակերպության կարծիքների:
- Բաժնի աշխատակիցները մասնակցել են ներպետական և միջազգային գործընկերների կողմից կազմակերպված մի շարք միջոցառումների,

- Նախապատրաստվել են Ակադեմիայի գիտական խորհրդի, «Բանբեր Արդարադատության ակադեմիայի» գիտագործնական հանդեսի խմբագրական խորհրդի նիստերը,
- Ստացվել և հաշվառվել են «Բանբեր Արդարադատության ակադեմիայի» գիտագործնական հանդեսում տպագրելու համար հեղինակների ուղարկած նյութերը, վերահսկվել է ստացվող հոդվածների ձևավորմանը ներկայացվող պահանջների ապահովումը, պահպանվել են հոդվածները, դրանց գրախոսականները:

<u>Բաժնի գործունեության վերաբերյալ վիճակագրական ամփոփ ցուցանիշներն արտացոլված են ստորև ներկայացվող աղյուսակ 5-ում՝</u>

<u>Աղյուսակ 5</u>

Բաժնի գործունեությունը 2018-2023 թթ. ընթացքում

Տարի	Ուսուցման ծրագրերի նախագծեր	Առարկայական ծրագրեր	Քննական նյութեր	Նոր դասընթացներ
2018	19	134	60	46
2019	16	118	42	33
2020	16	144	39	29
2021	17	90	54	25
2022	19	72	43	60
2023	26	85	62	19
Ընդամենը	**113**	**643**	**300**	**212**

V. ՀԵՌԱՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՎ ՏՏ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ

Հաշվետու ժամանակահատվածում դեպարտամենտն աշխատանքներ է իրականացրել հետևյալ ուղղություններով՝

1) հեռաուսուցման դասընթացների մշակում և իրականացում,
2) տարաբնույթ փորձարարական նորարական թվային լուծումների, ժամանակակից կրթական մեթոդոլոգիաների և մեթոդների ուսումնասիրություն, քննարկում և փորձարկում,
3) օտարերկրյա և միջազգային գործընկերների հետ համագործակցության նոր հեռանկարների ձևավորում, նոր ծրագրերի իրականացում*,
4) ունկնդիրների կողմից հեռաուսուցման դասընթացների էլեկտրոնային գնահատման ապահովում,
5) Միգրացիայի միջազգային կազմակերպության (IOM) հետ համագործակցությամբ՝ ՀՀ ՆԳՆ միգրացիայի և քաղաքացիության ծառայության աշխատակիցների համար վերապատրաստումների կազմակերպում:

1. Ընդհանուր տեղեկություններ

- Նախաձեռնվել և իրականացվել են ուսուցման և Ակադեմիայի կառավարման խորհրդի նիստերի առցանց կազմակերպման և տեխնիկական ապահովման աշխատանքներ:
- Ակտիվ գործունեություն է ծավալվել՝ ուղղված հեռաուսուցման ոլորտում առաջատար մասնագետների ու կազմակերպությունների հետ կապեր ձևավորելուն և զարգացնելուն:

2. Հեռաուսուցման դասընթացներ

2022 թվականի սեպտեմբերի 14-ից նոյեմբերի 24-ը կազմակերպվել և իրականացվել են հեռաուսուցման հետևյալ դասընթացները՝

* Հաշվետու ժամանակատվածում ***Աշխատանքի միջազգային կազմակերպության (ILO)*** հետ համագործակցության արդյունքում մշակվել են «Աշխատանքային իրավունքի արդի հարցերը» և «Միջազգային աշխատանքային իրավունք», իսկ ***ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի (UNHCR)*** հայաստանյան ներկայացուցչության հետ՝ «Քաղաքացիություն չունեցող անձի կարգավիճակի որոշումը» և «Փախստականի կարգավիճակի որոշման միջազգային չափանիշները և ապաստանի տրամադրման գործընթացը ՀՀ-ում» հեռաուսուցման դասընթացները:

1) «Փաստարկում և հռետորաբանություն»,
2) «Երեխաների նկատմամբ բռնության քննության առանձնահատկությունները»,
3) «Քաղաքացիական դատավարության արդի հիմնախնդիրները և արդյունավետության բարձրացման ուղղությունները»,
4) «Անչափահասի իրավունքների պաշտպանությունը քրեական գործերով վարույթի ընթացքում»,
5) Կառավարչական հմտություններ և ներազդման հոգեբանություն»,
6) «Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների կատարում»,
7) «Սեռով պայմանավորված, ընտանեկան բռնության և անչափահասների հանցավորության դեմ պայքարի քրեաիրավական և քրեադատավարական հիմնախնդիրները»,
8) «Կոռուպցիոն հանցագործություններ և անդրազգային կոռուպցիոն հանցագործությունների և կազմակերպված հանցավորության դեմ պայքարի քրեադատավարական գործիքակազմը»:

Վերը նշված դասընթացներին մասնակցության ***հայտ են ներկայացրել 163 դատավոր*** և ***դատախազ,*** որոնց առաջարկվել է կոնկրետ դասընթացի շրջանակներում ապահովել մասնակցություն՝ պատասխանելով ինքնաստուգիչ հարցերի:

Յուրաքանչյուր դասընթացի ***տևողությունը 10 շաբաթ էր:*** Մասնակցելով նշված դասընթացներից յուրաքանչյուրին՝ ունկնդիրները հնարավորություն են ունեցել անցնել ***40 ակադեմիական ժամին*** համարժեք վերապատրաստում:

- **«Փաստարկում և հռետորաբանություն»** դասընթացին մասնակցելու համար հայտագրվել են ***14 դատավոր*** և ***35 դատախազ:***

Դատավորներից 8-ը ապահովել են ***40***, ***5-ը՝ 36***, իսկ ***1-ը՝ 32*** ակադեմիական ժամին համարժեք մասնակցություն:

Դատախազներից 24-ը ապահովել են ***40***, ***6-ը՝ 36***, իսկ ***5-ը՝ 32*** ակադեմիական ժամին համարժեք մասնակցություն:

Դատախազներից 1-ը ապահովել է ***100%-անոց*** արդյունք՝ ճիշտ պատասխանելով բոլոր ինքնաստուգիչ հարցերին: ***10 դատավոր*** և ***17 դատախազ*** ճիշտ են պատասխանել ինքնաստուգիչ հարցերի ***90-99%-ին***, ***2 դատավոր*** և ***15 դատախազ***՝ ինքնաստուգիչ

հարցերի ***50-89%-ին***, իսկ ***1 դատավոր*** և ***3 դատախազ***՝ ինքնաստուգիչ հարցերի ***50%-ից պակասին***:

- «***Երեխաների նկատմամբ բռնության քննության առանձնահատկությունները***» դասընթացին մասնակցելու համար հայտագրվել են ***4 դատավոր*** և ***7 դատախազ:***

Դատավորներից 3-ը ապահովել են ***40***, իսկ ***1-ը՝ 32*** ակադեմիական ժամին համարժեք մասնակցություն: ***Դատախազներից 5-ը*** ապահովել են ***40***, իսկ ***2-ը՝ 32*** ակադեմիական ժամին համարժեք մասնակցություն:

Դատախազներից 1-ը ապահովել է ***100%-անոց*** արդյունք: ***Դատախազներից 2-ը*** ճիշտ են պատասխանել ինքնաստուգիչ հարցերի ***90-99%-ին***, իսկ ***4 դատավոր*** և ***4 դատախազ***՝ ինքնաստուգիչ հարցերի ***50-89%-ին***:

- «***Քաղաքացիական դատավարության արդի հիմնախնդիրները և արդյունավետության բարձրացման ուղղությունները***» դասընթացին մասնակցելու համար հայտագրվել են ***14 դատավոր*** և ***5 դատախազ:***

Դատավորներից 13-ը ապահովել են ***40***, իսկ ***1-ը՝ 4*** ակադեմիական ժամին համարժեք մասնակցություն: ***Դատախազներից 4-ը*** ապահովել են ***40***, իսկ ***1-ը՝ 32*** ակադեմիական ժամին համարժեք մասնակցություն:

Դատավորներից և դատախազներից ***ոչ ոք չի ապահովել 100%-անոց*** արդյունք: ***Դատավորներից 5-ը*** ճիշտ են պատասխանել ինքնաստուգիչ հարցերի ***90-99%-ին***, ***8 դատավոր*** և ***5 դատախազ***՝ ինքնաստուգիչ հարցերի ***50-89%-ին***, իսկ ***1 դատավոր***՝ ինքնաստուգիչ հարցերի ***50%-ից պակասին***:

- **«Անչափահասի իրավունքների պաշտպանությունը քրեական գործերով վարույթի ընթացքում»** դասընթացին մասնակցելու համար հայտագրվել են ***3 դատավոր*** և ***24 դատախազ:***

Դատավորներից 1-ը ապահովել է ***40***, ***1-ը՝ 36***, իսկ ***1-ը՝ 32*** ակադեմիական ժամին համարժեք մասնակցություն: ***Դատախազներից 19-ը*** ապահովել են ***40***, ***4-ը՝ 36***, իսկ ***1-ը՝ 32*** ակադեմիական ժամին համարժեք մասնակցություն:

Դատավորներից և դատախազներից ***ոչ ոք չի կարողացել ապահովել 100%-անոց*** արդյունք: ***Դատախազներից 11-ը*** ճիշտ են պատասխանել ինքնաստուգիչ հարցե-

րի ***90-99%-ին***, իսկ ***3 դատավոր*** և ***13 դատախազ***՝ ինքնաստուգիչ հարցերի ***50-89%-ին***:

- **«Կառավարչական հմտություններ և ներազդման հոգեբանություն»** դասընթացին մասնակցելու համար հայտագրվել են ***10 դատավոր*** և ***7 դատախազ:***

Բոլոր դատավորները և դատախազաները ապահովել են ***40*** ակադեմիական ժամին համարժեք մասնակցություն:

Դատավորներից 2-ը ապահովել է ***100%-անոց*** արդյունք՝ ճիշտ պատասխանելով բոլոր ինքնաստուգիչ հարցերին: ***Դատավորներից 4-ը*** և ***դատախազներից 5-ը*** ճիշտ են պատասխանել ինքնաստուգիչ հարցերի ***90-99%-ին***, իսկ ***4 դատավոր*** և ***2 դատախազ***՝ ինքնաստուգիչ հարցերի ***50-89%-ին***:

- **«Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների կատարում»** դասընթացին մասնակցելու համար հայտագրվել են ***8 դատավոր*** և ***2 դատախազ:***

Դատավորներից 7-ը ապահովել են ***40***, իսկ ***1-ը՝ 36*** ակադեմիական ժամին համարժեք մասնակցություն: ***Բոլոր դատախազները*** ապահովել են ***40*** ակադեմիական ժամին համարժեք մասնակցություն:

Դատավորներից և դատախազներից ***ոչ ոք չի կարողացել ապահովել 100%-անոց*** արդյունք: ***6 դատավոր*** և ***1 դատախազ*** ճիշտ են պատասխանել ինքնաստուգիչ հարցերի ***90-99%-ին***, իսկ ***2 դատավոր*** և ***1 դատախազ***՝ ինքնաստուգիչ հարցերի ***50-89%-ին***:

- **«Սեռով պայմանավորված, ընտանեկան բռնության և անչափահասների հանցավորության դեմ պայքարի քրեաիրավական և քրեադատավարական հիմնախնդիրները»** դասընթացին մասնակցելու համար հայտագրվել է ***8 դատախազ:***

Նրանցից ***5-ը*** ապահովել են ***40***, ***2-ը՝ 36***, իսկ ***1-ը՝ 32*** ակադեմիական ժամին համարժեք մասնակցություն:

Մասնակիցներից ***ոչ ոք չի կարողացել ապահովել 100%-անոց*** արդյունք կամ ճիշտ պատասխանել ինքնաստուգիչ հարցերի ***90-99%-ին***: Նրանցից ***7-ը*** ճիշտ են պատասխանել ինքնաստուգիչ հարցերի ***50-89%-ին***, իսկ ***1-ը՝ 50%-ից պակասին:***

- **«Կոռուպցիոն հանցագործություններ և անդրազգային կոռուպցիոն հանցագործությունների և կազմակերպված հանցավորության դեմ պայքարի քրեադատավարական գործիքակազմը»** դասընթացին մասնակցելու համար հայտագրվել են ***18 դատախազ*** և ***4 դատավոր:***

Դատախազներից 12-ը ապահովել են ***40***, ***3-ը՝ 36***, ***3-ը՝ 32*** ակադեմիական ժամին համարժեք մասնակցություն: ***Դատավորներից 3-ը*** ապահովել են ***40***, իսկ ***1-ը՝ 36*** ակադեմիական ժամին համարժեք մասնակցություն:

Դատավորներից և դատախազներից ***ոչ ոք չի կարողացել ապահովել 100%-անոց*** արդյունք: ***2 դատավոր*** և ***4 դատախազ*** ճիշտ են պատասխանել ինքնաստուգիչ հարցերի ***90-99%-ին***, իսկ ***2 դատավոր*** և ***14 դատախազ***՝ ինքնաստուգիչ հարցերի ***50-80%-ին***:

3. Ընդհանրացված ամփոփում

Հաշվետու ժամանակահատվածում հեռաուսուցման վերը նշված դասընթացների շրջանակներում վերապատրաստվելու ***հայտ*** է ներկայացրել ***163*** ունկնդիր ***(57 դատավոր*** և ***106 դատախազ)***, ովքեր հիմնականում բավարարել են վերապատրաստված համարվելուն ներկայացվող պահանջը՝ մասնակցել են համապատասխան դասընթացի առնվազն 80%-ին: Տվյալ շեմը ***չի հաղթահարել*** ընդամենը ***1 դատավոր***, ով չի կարողացել բավարարել վերապատրաստված համարվելուն ներկայացվող միակ պահանջը՝ մասնակցությունը համապատասխան դասընթացի առնվազն 80%-ին:

Հաշվետու ժամանակահատվածում առաջարկված հեռաուսուցման դասընթացներին ինչպես դատավորների, այնպես էլ դատախազների մասնակցության աստիճանը եղել է բավականին բարձր: Մասնավորապես՝ ***դատավորների 79%-ը*** և ***դատախազների 74%-ը*** ապահովել են ***40*** ակադեմիական ժամին համարժեք (100%-անոց) մասնակցություն:

<u>Դեպարտամենտի գործունեության վերաբերյալ վիճակագրական ամփոփ ցուցանիշներն արտացոլված են ստորև ներկայացվող աղյուսակներ 6-ում և 7-ում՝</u>

Աղյուսակ 6

Դասընթացներ	Հայտով ներկայացված		Ոսուցում անցած (%)	
Փաստարկում և հռետորաբանություն	դատավոր	դատախազ	Դատավոր	դատախազ
	14	35	14	35
	Ընդամենը՝ 49		***Ընդամենը՝ 49 (100,0%)***	
Երեխաների նկատմամբ բռնության քննության առանձնահատկությունները	դատավոր	դատախազ	Դատավոր	դատախազ
	4	7	4	7
	Ընդամենը՝ 11		***Ընդամենը՝ 11 (100,0%)***	
Քաղաքացիական դատավարության արդի հիմնախնդիրները և արդյունավետության բարձրացման ուղղությունները	դատավոր	դատախազ	Դատավոր	դատախազ
	14	5	13	5
	Ընդամենը՝ 19		***Ընդամենը՝ 18 (94,7%)***	
Անչափահասի իրավունքների պաշտպանությունը քրեական գործերով վարույթի ընթացքում	դատավոր	դատախազ	Դատավոր	դատախազ
	3	24	3	24
	Ընդամենը՝ 27		***Ընդամենը՝ 27 (100,0%)***	
Կառավարչական հմտություններ և ներազդման հոգեբանություն	դատավոր	դատախազ	Դատավոր	դատախազ
	10	7	10	7
	Ընդամենը՝ 17		***Ընդամենը՝ 17 (100,0%)***	
Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների կատարում	դատավոր	դատախազ	Դատավոր	դատախազ
	8	2	8	2
	Ընդամենը՝ 10		***Ընդամենը՝ 10 (100,0%)***	
Սեռով պայմանավորված, ընտանեկան բռնության և անչափահասների հանցավորության դեմ պայքարի քրեաիրավական և քրեադատավարական հիմնախնդիրները	դատավոր	դատախազ	Դատավոր	դատախազ
	—	8	—	8
	Ընդամենը՝ 8		***Ընդամենը՝ 8 (100,0%)***	
Կոռուպցիոն հանցագործություններ և անդրազգային կազմակերպված հանցավորություն. կոռուպցիոն հանցագործությունների և կազմակերպված հանցավորության դեմ պայքարի քրեադատավարական գործիքակազմը	դատավոր	դատախազ	Դատավոր	դատախազ
	4	18	4	18
	Ընդամենը՝ 22		***Ընդամենը՝ 22 (100,0%)***	
ԸՆԴԱՄԵՆԸ	**դատավոր**	**դատախազ**	**Դատավոր**	**դատախազ**
	57	**106**	**56**	**106**
ԸՆԴՀԱՆՈՒՐ	**163**		**162 (99,4%)**	

Աղյուսյակ 7

Դեպարտամենտի գործունեությունը 2018-2023 թթ. ընթացքում

	2018	2019	2020	2021	2022	2023	Ընդամենը
Դասընթացներ	4	5	5	6	10	8	**38**
Հայտ ներկայացրած	340	169	308	166	164	163	**1 310**
Ոսուցում անցած (%)	339 (99,4%)	169 (100,0%)	307 (99,7%)	163 (98,2%)	161 (98,2%)	162 (99,4%)	**1 301 (99,3%)**

VI. ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԱՅԼ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

- **Գրադարանավար-արխիվավարները հաշվետու ժամանակահատվածում աշխատանքներ են իրականացրել հետևյալ ուղղություններով՝**
  - ✓ գրքային ֆոնդի լրահամալրում և գույքագրում, գրադարանի նոր՝ 2023 թվականի հավաքածուի (137 անուն, 147 օրինակ նոր գրականություն, այդ թվում՝ արտասահմանյան երկրներից ստացվող) կազմում, ցուցակագրում և հաշվառում,
  - ✓ Ակադեմիայի ունկնդիրներին և այլ հետաքրքրվողներին սպասարկելու գործընթացի բարելավում,
  - ✓ անձը հաստատող փաստաթղթի և գրանցամատյանի միջոցով ընթերցողների գրանցում և սպասարկում՝ գրադարանից օգտվելու կանոններին համապատասխան,
  - ✓ գրականություն որոնելու կամ նյութերին իրազեկ լինելու գործում ունկնդիրներին օգնության ցուցաբերում,
  - ✓ ընթացիկ տարվա փաստաթղթերի արխիվացում, արխիվային նյութերի պահպանում և անհրաժեշտ փաստաթղթաշրջանառության վարում՝ գործող իրավակարգավորումներին համապատասխան,
  - ✓ «Պահպանության ոչ ենթակա փաստաթղթերի և գործերի առանձնացման մասին» ակտի հիման վրա առանձնացված թվով 3 հազար 731՝ պահպանության ժամկետները լրացած, գիտապատմական արժեք չունեցող և գործնական նշանակությունը կորցրած փաստաթղթերի ոչնչացում:

- **Համագործակցության և հանրային կապերի բաժինը հաշվետու ժամանակահատվածում աշխատանքներ է իրականացրել հետևյալ ուղղություններով՝**

  1) հայաստանյան, օտարերկրյա և միջազգային կառույցների հետ համագործակցության հաստատում և ընդլայնում, մասնավորապես՝
  - ✓ «Հանրային կառավարման զարգացման, ռազմավարական հետազոտությունների և վերապատրաստման կենտրոն» ՀԿ-ի, ինչպես նաև Ալբանիայի դատավորների և դատախազների դպրոցի հետ համագործակցության հուշագրերի ստորագրում,

- ✓ առկա համագործակցության շրջանակներում Ղազախստանի Հանրապետության գերագույն դատարանին կից արդարադատության ակադեմիայի ներկայացուցիչների որակավորման բարձրացմանն ուղղված դասընթացների (այդ թվում՝ ՀՀ բարձրագույն դատական խորհրդի, Շվեդիայի ազգային դատարանների վարչության ներկայացուցիչների հետ հանդիպումների, Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում ընթացող դատական նիստին մասնակցության և այլն) կազմակերպում,
- ✓ գործընկեր կառույցների և դրանց ներկայացուցիչների հետ համագործակցությամբ հանդիպումների, դասախոսությունների, սեմինարների, քննարկումների և այլ միջոցառումների կազմակերպմանը մասնակցություն,
- ✓ միջազգային (ԵԽ, ԵՄ, Հայաստանի Հանրապետությունում ԱՄՆ դեսպանության ԹՊԻՀ գրասենյակ, ԱՄՆ ՄԶԳ, ԵԱՏՄ դատարան, «Կոնրադ Ադենաուեր» հիմնադրամ, «ԷԿՈՐԻՍ», Մարդու իրավունքների և մարդասիրական իրավունքի Ռ.Վալլենբերգի անվան շվեդական ինստիտուտ, Միջազգային իրավական համագործակցության գերմանական հիմնադրամ) և այլ գործընկերների հետ համագործակցությամբ Ակադեմիայի աշխատակազմի ներկայացուցիչների մասնագիտական հմտությունների և կարողությունների կատարելագործմանն ուղղված սեմինարների, ճանաչողական այցերի, գործուղումների կազմակերպման աշխատանքներին մասնակցություն,
- ✓ ԵՄ կողմից ֆինանսավորվող «Անհրաժեշտ տեխնիկական աջակցություն Հայաստանում արդարադատության ոլորտի բարեփոխումներին նպաստելու համար» ծրագրի շրջանակում կազմակերպված Ակադեմիայի պատվիրակության ճանաչողական այց Նիդեռլանդների Թագավորության դատական և դատախազական ուսուցման կենտրոն,
- ✓ ԵՄ իրավապահ մարմինների աշխատակիցների վերապատրաստման գործակալության՝ «Վերապատրաստում և գործառնական համագործակցություն ընդդեմ կազմակերպված հանցագործությունների» ծրագրի շրջանակներում Ակադեմիայի աշխատակազմի ներկայացուցչի մասնակցություն Բուդապեշ-

տում անցկացված «Վերապատրաստողների վերապատրաստում. Էլեկտրոնային ուսուցման նորարար գործիքակազմ» թեմայով դասընթացին,

- ✓ ԵԽ «Կանանց արդարադատության մատչելիություն. գենդերային հավասարության և կանանց նկատմամբ բռնության չափանիշների իրականացում» ծրագրի շրջանակներում Բուդապեշտում մենթորների միջազգային վերապատրաստման դասընթացին Ակադեմիայի պրոոեկտորի մասնակցություն,
- ✓ ՀՀ-ում ՌԴ, Բելառուսի Հանրապետության դեսպանությունների, նաև Երևանում Գիտության և մշակույթի ռուսական կենտրոնի հետ համագործակցության խորացմանն ուղղած հանդիպումների, միջոցառումների կազմակերպում (այդ թվում՝ ԽՍՀՄ ռազմածովային նավատորմի ադմիրալ, ԽՍՀՄ հերոս, գիտնական, գրող Հովհաննես (Իվան) Իսակովին նվիրված՝ «Ադմիրալ Իսակով» ֆիլմի ցուցադրություն և այլն),
- ✓ Հայաստանյան և միջազգային կառույցների հետ համագործակցությունը զարգացնելու նպատակով հաջորդ տարվա անելիքների ուրվագծում.

2) Ակադեմիայի գործունեության հրապարակայնության ապահովում, մասնավորապես՝

- ✓ Ակադեմիայի պաշտոնական կայքի (www.aoj.am) բնականոն աշխատանքի ապահովում, առաջացած խնդիրների լուծում,
- ✓ Ակադեմիայում անցկացվող միջոցառումների և ընդհանրապես՝ գործունեության (այդ թվում՝ ուսումնական գործընթացի) լուսաբանում, կայքում տեղեկատվության օպերատիվորեն տեղադրում (երեք լեզվով՝ հայերեն, ռուսերեն, անգլերեն),
- ✓ հայաստանյան հեռարձակվող և էլեկտրոնային լրատվամիջոցների հետ համագործակցության ընդլայնում,
- ✓ հայաստանյան լրատվամիջոցներին մամուլի հաղորդագրությունների տրամադրում,
- ✓ մշտադիտարկումների անցկացում, արդյունքների գնահատում, տեղեկատվական էլեկտրոնային նյութերի արխիվացում,

- ✓ սոցիալական ցանցերում («Facebook», «Twitter», «Linkedin» «Telegram», «You Tube») Ակադեմիայի էջերի շարունակական զարգացում,
- ✓ Ակադեմիայում տեղի ունեցած և դրան վերաբերող միջոցառումների լուսանկարում և տեսանկարահանում, մոնտաժում, YouTube-յան ալիքում և պաշտոնական կայքում տեղադրում,
- ✓ «Wikipedia» հանրամատչելի հանրագիտարանում, «Սփյուռ» տեղեկատվական բազայում, «Արեգ» տեղեկատուում Ակադեմիայի ներկայացվածության ապահովում.

3) այցերի, միջոցառումների կազմակերպում, մասնավորապես՝

- ✓ Ակադեմիայի 10-ամյակին նվիրված հանդիսավոր միջոցառման նախապատրաստում, անցկացում և լուսաբանում,
- ✓ պատվիրակությունների, աշխատանքային խմբերի, հայաստանյան և միջազգային գործընկերների, հյուրերի այցերի կազմակերպման արարողակարգային հարցերի լուծմանը ներգրավում,
- ✓ ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի և Վանաձորի պետական համալսարանի իրավագիտության բաժնի ուսանողների, Երևանի տարբեր դպրոցների աշակերտների՝ Ակադեմիա այցերի կազմակերպում.

4) հասարակայնության հետ կապերի զարգացում և ամրապնդում, մասնավորապես՝

- ✓ ներքին և արտաքին հաղորդակցության ամենօրյա պատշաճ իրականացում,
- ✓ հեռախոսազանգերին և Ակադեմիայի info@justiceacademy.am, ինչպես նաև infojusticeacademy@gmail.com էլեկտրոնային փոստերին, սոցցանցերի էջերի միջոցով ուղարկված նամակներին և տեղեկատվության հարցումներին սահմանված ժամկետներում պատասխանների տրամադրում.

5) ընթացիկ այլ աշխատանքներ, մասնավորապես՝

- ✓ համագործակցության և հանրային կապերի ոլորտում ընթացիկ այլ աշխատանքների իրականացում,
- ✓ Ակադեմիայի ղեկավարության հանձնարարությունների կատարում:

- **Անձնակազմի և փաստաթղթաշրջանառության բաժինը հաշվետու ժամանակահատվածում աշխատանքներ է իրականացրել հետևյալ ուղղություններով՝**
  - ✓ 281 աշխատանքային և ծառայությունների մատուցման պայմանագրերի կազմում և ստորագրման ապահովում (այդ թվում՝ նախապատրաստական դասընթացների կազմակերպման նպատակով),
  - ✓ 208 ներքին իրավական ակտերի, այդ թվում՝ աշխատանքի ընդունման, աշխատանքից ազատման, արձակուրդի, խրախուսանքի և այլ ընթացիկ ներքին իրավական ակտերի նախագծերի կազմում,
  - ✓ աշխատակիցների կազմի, նրանց աշխատանքի ընդունելու և աշխատանքից ազատելու վերաբերյալ տեղեկությունների էլեկտրոնային շտեմարանի վարում,
  - ✓ սոցիալական փաթեթին առնչվող անհրաժեշտ աշխատանքների կազմակերպում և իրականացում,
  - ✓ փաստաթղթաշրջանառության պատշաճ ապահովում՝ փաստաթղթերի մուտքագրում (1 002) և ելքագրում (454), դրանց պատճենահանում և հասցեատերերին հանձնում,
  - ✓ յուրաքանչյուր ամսվա վերջում Ակադեմիայի աշխատակիցների աշխատաժամերի հաշվարկի վերաբերյալ տեղեկագրերի, ինչպես նաև ամենամյա արձակուրդի գրաֆիկի կազմում,
  - ✓ ըստ անհրաժեշտության՝ տեղեկանքների կազմում, ավարտական դիպլոմների հաշվառման մատյանների վարում, Ակադեմիայի ղեկավարությանը և կառուցվածքային այլ ստորաբաժանումներին համապատասխան տեղեկատվությամբ ապահովում և ընթացիկ այլ աշխատանքների իրականացում:

- **Համակարգչային մասնագետը հաշվետու ժամանակահատվածում աշխատանքներ է իրականացրել հետևյալ ուղղություններով՝**
  - ✓ Ռեկտորի և Աշխատակազմի ղեկավարի անմիջական հանձնարարությունների կատարում,
  - ✓ համակարգիչների, սերվերների և հարակից սարքերի (տպիչներ, սկաներներ, անվտանգության տեսախցիկներ և այլն), լոկալ, WIFI և INTERNET ցանցերի,

ինչպես նաև «Հոսթինգ» ծառայության («ABC դոմեն» ընկերության հետ համատեղ), էլեկտրոնային անցակետային համակարգի և հեռախոսային ցանցի ընթացիկ սպասարկում և թերությունների վերացում,

- ✓ հակավիրուսային և այլ ծրագրերի միջոցով համակարգիչների, լոկալ, WIFI և INTERNET ցանցերի անվտանգության ապահովում,
- ✓ աշխատակիցների, վերապատրաստվողների և դատավորների թեկնածուների հավակնորդների, դատախազների ու քննիչների թեկնածուների ներկայության վերաբերյալ հաշվետվությունների պատրաստում (ամփոփ, օրական և շարժի տեսքով),
- ✓ գրավոր և բանավոր քննությունների տեսաձայնագրում և DVD սկավառակների վրա պահպանում,
- ✓ պաշտոնական ձևաթղթերի, աշխատակիցների վկայականների, պատվոգրերի, շնորհակալագրերի և դատավորի, դատախազի, քննիչի թեկնածուների ավարտական դիպլոմների պատրաստում և տպագրում,
- ✓ ընթացիկ այլ աշխատանքներ:

- **Հյուրանոցի ադմինիստրատորը հաշվետու ժամանակահատվածում աշխատանքներ է իրականացրել հետևյալ ուղղություններով՝**
  - ✓ ընդհանուր առմամբ 87 ունկնդրի (դատավորներ, դատավորի թեկնածուներ, դատավորի թեկնածուի հավակնորդներ, դատախազներ, դատախազի թեկնածուներ, քննիչներ, քննիչի թեկնածուներ) համար կացարանի և համապատասխան այլ պայմանների ապահովում,
  - ✓ Ղազախստանի Հանրապետության գերագույն դատարանին կից Արդարադատության ակադեմիայի աշխատակազմի 5 ներկայացուցչի համար կացարանի և համապատասխան այլ պայմանների ապահովում,
  - ✓ Ալբանիայի Հանրապետության դատավորների և դատախազների դպրոցի 7 անձից կազմված պատվիրակության անդամների համար կացարանի և համապատասխան այլ պայմանների ապահովում:

- **Տեխնիկատնտեսական բաժինը հաշվետու ժամանակահատվածում աշխատանքներ է իրականացրել հետևյալ ուղղություններով՝**
  - ✓ վարչական շենքի հրշեջ-անվտանգությունն ապահովելու համար, երաշխավորված ժամկետի համաձայն, լիցքավորվել են նախատեսված 18 կրակմարիչներ,
  - ✓ Ակադեմիայի հիմնադրման 10-ամյակով պայմանավորված՝ կատարվել են տարաբնույթ վերանորոգման և հարդարման աշխատանքներ, ներկվել են բակային տարածքի ամբողջ երկարությամբ (150 գ.մ) եզրաքարերը, նույն տարածքում տեղադրված նստարաններն ու աղբամանները, ցանկապատը, կայանատեղիի գծանշումները,
  - ✓ շենքային համալիրի 1-ին հարկի միջանցքային հատվածում և առանձին աշխատասենյակներում իրականացվել են վերանորոգման (ընդհանուր 420 մ^2 մակերեսով) և հյուսնային (43 գ.մ երկարությամբ) աշխատանքներ,
  - ✓ կապիտալ և ընթացիկ վերանորոգման են ենթարկվել մի շարք ինժեներական հանգույցներ ու սարքավորումներ,
  - ✓ մաքրման և լվացման են ենթարկվել սանհանգույցները սպասարկող կոյուղագծերը, կաթսայատների ծխատար խողովակները, մասնակի վերանորոգվել է կաթսաների ջրամատակարարման համակարգը՝ տեղադրելով նոր փականներ, չափիչ սարքեր, ջրամղիչ պոմպեր,
  - ✓ անվտանգության պատշաճ ապահովման նպատակով բաժնի երկու աշխատակիցներ մասնակցել են «ՋԵՐՄԱԷՆԵՐԳՈ» ՍՊԸ ուսումնական կենտրոնի դասընթացներին և ստացել կաթսայատան ու գազի տնտեսության պատասխանատու անձի որակավորում,
  - ✓ սանհանգույցների մեծ մասում փոխարինվել են ճկուն խողովակները, փականներն ու ծորակները,
  - ✓ ընթացիկ վերանորոգման են ենթարկվել ճաշարանային հատվածի օդափոխման համակարգի համար նախատեսված սարքավորումները, տեղադրվել են նոր լուսամփոփներ, տեսանկարահանման սարքեր:

VII. ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Հաշվետու ժամանակահատվածում Ակադեմիան շարունակել է հաշվապահական հաշվառում իրականացնել «Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի դրույթներին և դրանից բխող իրավական ակտերին համապատասխան:

1. Եկամուտներ

Հաշվետու ժամանակահատվածում Ակադեմիայի կողմից ապահովվել են մուտքեր՝ հետևյալ աղբյուրներից՝

1) Պետական բյուջեից «Վերապատրաստման ծառայություններ» ծրագրով դրամաշնորհի ձևով ստացված մուտքեր՝ ***248 մլն 671 հազ. 400*** դրամ,
2) «Մասնագիական վերապատրաստում ստացող ունկնդիրների կրթաթոշակ» ծրագրով ստացված մուտքեր՝ ***66 մլն 669 հազ. 000*** դրամ,
3) ՀՀ քննչական կոմիտեին մատուցված վերապատրաստման ծառայությունների դիմաց ստացված մուտքեր՝ ***3 մլն 811 հազ. 200*** դրամ,
4) ՀՀ քննչական կոմիտեի ունկնդիրների կրթաթոշակի տրամադրման նպատակով ստացված մուտքեր՝ ***25 մլն 067 հազ. 300*** դրամ,
5) ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեին մատուցված վերապատրաստման ծառայությունների դիմաց ստացված մուտքեր՝ ***2 մլն 840 հազ. 400*** դրամ,
6) ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի ունկնդիրների կրթաթոշակի տրամադրման նպատակով ստացված մուտքեր՝ ***732 հազ. 300*** դրամ,
7) Բանկային տոկոսներից եկամուտներ՝ ***682 հազ. 300*** դրամ,
8) Այլ կազմակերպություններին (World Vision, UNHCR, ILO, IOM) մատուցված ծառայություններից մուտքեր՝ ***38 մլն 325 հազ. 200*** դրամ,
9) Ձեռնարկատիրական գործունեությունից գոյացած եկամուտներ՝ ***17 մլն 100 հազ. 000*** դրամ:

2. Ծախսեր

Հաշվետու ժամանակահատվածում ծախսերը կատարվել են հետևյալ ուղղություններով.

Անվանում	Գումար
Աշխատավարձի գծով ծախսեր	190,220,505.00
Պարգևատրումների, խրախուսումների և հատուկ վճարների գծով ծախսեր	17,602,600.00
Այլ վարձատրությունների (լրավճար) գծով ծախսեր	14,050,000.00
Գործառնական և բանկային ծառայությունների գծով ծախսեր	60,000.00
Էներգիայի ծառայությունների գծով ծախսեր	8,450,000.00
Կոմունալ ծառայությունների գծով ծախսեր	700,000.00
Կապի ծառայությունների գծով ծախսեր	1,348,500.00
Ապահովագրության գծով ծախսեր	50,000.00
Արտագերատեսչական ծախսերի գծով ծախսեր	4,500,000.00
Արտասահմանյան գործուղումների գծով ծախսեր	1,500,000.00
Վարչական ծառայությունների գծով ծախսեր	4,650,000.00
Կառավարչական ծառայությունների գծով ծախսեր	800,000.00
Ներկայացուցչական ծախսերի գծով ծախսեր	2,500,000.00
Ընդհանուր բնույթի այլ ծառայությունների գծով ծախսեր	1,626,200.00
Մասնագիտական ծառայությունների ձեռք բերման գծով ծախսեր	7,179,000.00
Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգման և պահպանման գծով ծախսեր	2,500,000.00
Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգման և պահպանման գծով ծախսեր	2,000,000.00
Գրասենյակային նյութերի ու պարագաների (հագուստի) ձեռքբերման գծով ծախսեր	600,000.00
Տրանսպորտային նյութերի ու պարագաների ձեռք բերման գծով ծախսեր	1,110,000.00
Կենցաղային և հանրային սննդի նյութերի ու պարագաների գծով ծախսեր	960,000.00
Հատուկ նպատակային այլ նյութերի ու պարագաների գծով ծախսեր	950,000.00
Բյուջեից վճարվող կրթական, մշակութային և սպորտային նպաստների (հատուցումների) գծով ծախսեր	92,468,600.00
Այլ հարկերի գծով ծախսեր	45,403,800.00
Այլ ծախսերի գծով ծախսեր	6,298,100.00
Հաշվետու ժամանակաշրջանի սկզբում կազմակերպության հաշվի ազատ միջոցներ	3,628,200.00

VIII. ԱՅԼ ՈԼՈՐՏՆԵՐ

Հաշվետու ժամանակահատվածում Ակադեմիայում աշխատանքներ են իրականացվել նաև հետևյալ ուղղություններով.

- Ակադեմիայի գիտական խորհրդի երաշխավորությամբ լույս են տեսել «Բանբեր Արդարադատության ակադեմիայի» գիտագործնական հանդեսի հերթական՝ 9-րդ և 10-րդ համարները, որոնցից առաջինը նվիրված էր ԽՍՀՄ և ՌԴ ականավոր իրավագետ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Արդարադատության ակադեմիայի պատվավոր պրոֆեսոր Յուրի Միրանի Անտոնյանի 90-ամյա, իսկ երկրորդը՝ Ակադեմիայի հիմնադրման 10-ամյա հոբելյանին:
- ԱՄՆ ՄԶԳ հետ համագործակցությամբ նախաձեռնվել և ընթացքի մեջ են Ակադեմիայի պաշտոնական նոր կայքէջի (www.aoj.am) լավարկմանը և տեսողության խնդիրներ ունեցողների համար կիրառելի դարձնելուն, ինչպես նաև դասավանդման սիմուլյացիոն մեթոդների մշակմանը և ուսումնական գործընթացում ներդրմանն ուղղված աշխատանքները:
- Իրականացվել է 2022 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար կազմված ֆինանսական հաշվետվությունների անկախ վերստուգում (աուդիտ), որի եզրակացությամբ՝ ֆինանսական հաշվետվությունները կազմվել են ՀՀ հանրային հատվածի հաշվապահական հաշվառման մասին ստանդարտի համաձայն և բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Ակադեմիայի ֆինանսական արդյունքները:
- Ձեռնարկատիրական գործունեության շրջանակներում՝ դատավորների թեկնածուների, դատախազի և քննիչի թեկնածությունների ցուցակները համալրելու նպատակով անցկացվող մրցույթներին մասնակցելու ցանկություն ունեցող անձանց համար կազմակերպվել են նախապատրաստական դասընթացներ:

Ռեկտոր **Ս.Վ. Առաքելյան**